

ՀԱՅՐԵՆԻՔ

ԱՐԵՎՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ



Ուրբաթ 1 Մարտ 2019 - Թիւ 9

Յրատարակչութիւն՝

Արեւմտեան Հայաստանի
Ոստմնասիրութիւններու Կեդրոնի

Հետադարձ կապ
mfa@warmeniagov.com

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջին էջ	1
Արեւմտեան Հայաստանի Հանրապետութիւն	2
Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Կառավարութիւն	4
Արեւմտեան Հայաստանի Տարագիր Հայութեան ձայնը	6
Միջազգային Օրէնք	8
Կրթութիւն եւ գիտութիւն - Պատմական	9
Պետական փաստաթուղթեր	11
Վերջին էջ	15



ՀԱՅՐԵՆԻՔ

ԱՐԵՎՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

Ուրբաթ 1 Մարտ 2019 - Թիւ 9

ՈՐՁ ՀԱՅՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ՝ ԱՆ ՆՈՅՆԵԱՆ ՍՈՒՓ Է ՈՐԵԱՆ 24-Ը

23 ԱՊՐԻԼԸ "ՏՕՆԱԿԱՆ ՕՐ" ՀՈԶԱԿԵԼ՝ ԱԶԳԱՅԻՆ ԱՆԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹԻՒՆ Է

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԸ ԿԸ ՍԿՍԻ ՀԵՏԱՔՐՔՐՈՒՄԻԼ ԱՐԵՎՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՎ

(Մանրամասնություններ էջ 8)

ՄԻԱԺԱՄԱՆԱԿ ԸՆԹԱՑՈՂ ՅԱՌԱՋԸՆԹԱՑ ԵՒ ՅԵՏԸՆԹԱՑ

«...Ուուսաստանի եւ Արեւելահայաստանի գոյությունական շահերը կը համընկնին Փանթուրքիզի վտանգին դեմ:
Ոչ մէկ ՀԱՅ իրաւունք ունի մոռնալու կամ չգիտնալ ձեւացնելու այս աշխարհաստրատեգիական պատմական
իրականությունը:»

(Ամբողջական նիւթը էջ 6)



ԱՐԵՎՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԽՈՒՄԲ ՄԸ ՊԱՏՊԱՄԱԲՈՐՆԵՐ, ԱՅԺՄԵԱԿԱՆ ՇԱՐՔ ՄԸ ՀԱՐՑԵՐՈՒ ՇՈՒՐՋ ԽՈՐԹԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵՑԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ՝ ԳԱՌՆԻԿ ՍԱՐԳԻՍԵԱՆԻՆ ՀԵՏ

2019-ի Փետրուար 18-28 Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Խորհրդարանի խումբ մը պատգամաւորներ, Աժ Նախագահ՝ Աղւան Տօնականեանի գլխաւորութեամբ, քաղաքական եւ ռազմավարական շարք մը այժմեական հարցերու շուրջ խորքային քննարկումներ անցկացուցին Հանրապետութեան Վարչապետ՝ Գառնիկ Սարգիսեանին հետ, որոնց ընթացքին Վարչապետ Սարգիսեանը կատարեց յետեւեալ հաստատումները.

- ❖ «Ներկայ Թիւրքիան իրաւունք չ'ունի ներկայանալ որպէս **Իսլամական աշխարհի ներկայացուցիչը**: Ան միակ իրաւահաջորդը չ'է՝ մի անգամ ընթացող կործանուած Օսմանեան Կայսրութեան: Ինչպէս նաեւ, **Ներկայ Թիւրքիոյ բոլոր բնակիչները թիւրք չ'են**, այնտեղ այսօր կապրին միլիոնաւոր Իսլամացած Հայեր որոնք լրիվ այլ ձեւով կը մտածեն եւ ապագային նկատմամբ ստոյք տարբեր ծրագիրներ ունին»
- ❖ «Հայաստանի Հանրապետութեան անկախութեան Հռչակագիրը ամեն ինչ կ'ըսէ ՀՀ դիրքորոշումներուն մասին Արեւմտեան Հայաստանի վերաբերեալ:» **(Մանրամասնություններ էջ 8)**
- ❖ «Հայոց ազգային գերագոյն շահերը կ'ենթադրէին որ Հայաստանի Հանրապետութիւնը զինք անուաներ Արեւելեան Հայաստանի Հանրապետութիւն, որպէսզի ողջ Հայութեան մօտ՝ Արեւմտեան Հայաստանի փաստացի գոյութեան նկատմամբ շփոթություններ չ'ստեղծեր:»
- ❖ «Արցախի հարց գոյութիւն չ'ունի: Կայ 19 Յունուար 1920-ի, Արեւմտեան Հայաստանի տարածքներուն վրայ, միջազգային ճանաչում ստացած, Հայաստան Պետութեան արեւելեան սահմանի հարց: Շատեր կը խօսին Ուիլսոնեան քարտեզի մասին առանձ անդրադարձալու որ ան ընդամենը Հայաստան Պետութեան եւ Թուրքիոյ սահմաններու մասին է, իսկ արեւելեան սահմանը Ադրպեյճանի հետ կը որոշուի ըստ Սեւրի խաղախոսութեան դաշնագրի 92-րորդ յօդուածով: Այն դաշնագիրը որ հակարակ բոլոր ոչ անմեղ տարածայնություններուն՝ ան ուժի մէջ է եւ վաւերացուած է Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան կողմէ, 24 Յունիս 2016-ին:»
- ❖ «Հայ ազգի քերագոյն շահերու պաշտպանութեան կեդրոնական շտապ-ի ստեղծումը այսօր, որեւէ ուրիշ ժամանակէ աւել, կը դարձնայ արժմեական՝ ազգային եւ պատմական անհրաժեշտութիւն մը որ պետք է ձեւավորուի Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան, Արեւելեան Հայաստանի Հանրապետութեան եւ Արցախի ներկայացուցիչներով :»

ՓԱՐԻԶԻ ԽԱՂԱՊՈՒԹԵԱՆ ՎԵՏԱԺՈՂՈՎԻ ԵՒ ԱՐԵՎՍՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՅՈՒՇԱԳԻՐԻ ՀԱՐԻՐԱՄԵԱԿԸ



Փարիզի Խաղաղութեան Վեհաժողովի հարիւրամեակն ու Արեւմտեան Հայաստանի մասին Յուշագիրը տեղի ունեցան Փարիզի 16-րդ վարչաշրջանի քաղաքապետարանին մէջ:

Այս պատմական պահը թոյլ կուտայ յիշատակել 1919 թ.-ի Յունուար 18-ի Փարիզի Խաղաղութեան Վեհաժողովի հարիւրամեակը, եւ Արեւմտեան Հայաստանի մասին Յուշագիրը, նաեւ 1919 թ.-ի Փետրուար 1-ին Հայկական լեգիոնի կազմաւորման 100-ամեակը, որ ապագայ Հայաստանի ազգային բանակի կորիզն էր, ինչպէս նաեւ Երիտթիւրքերուն դժմ դատաւարութիւններու 100-ամեակը: Նախագահ Արմենակ Աբրահամեանն իր հաշուետւութեան մէջ յայտարարեց, որ «վեհաժողովի նպատակը կ'իրականանար եթէ կարենար ցոյց տալ, թէ ինչպէս 18.12.1917 թ.ին Երզնկայի զինադադարէն յետոյ, Արեւմտեան Հայաստանի տարածքին ձեւաւորուեցաւ հայկական պետութիւն, զոր Դաշնակիցներու Գերագոյն խորհուրդը ճանչցաւ դէ ֆակտո, իսկ 1920 թուականի Մայիս 11-ին՝ դէ յուրե»:

Նախագահ Արմենակ Աբրահամեանը նաեւ յիշեցուց, թէ ինչպէս 1918 թ.-ի Յունիս 4-ին Նախագահ Աւետիս Ահարոնեանը ստորագրեց Բաթումի պայմանագիրը քեմալական ուժերուն հետ, Նախագահ Պօղոս Նուբարը իրաւիւրեց զինք միանալու Հայաստանի ազգային պատուիրակութեան եւ աջակցեցաւ Հայաստանի մասին Յուշագիրին եւ յայտարարեց Հայաստանի անբաժանելիութիւնը՝ Դաշնակիցներու Գերագոյն խորհուրդին առջեւ:

Բացի այդ, 1919 թ.-ի Մայիս 15-ին դաշնակից պետութիւններու Փարիզի մէջ կայացուցած Խաղաղութեան Վեհաժողովէն յետոյ տեղի ունեցաւ հայկական ազգային համաժողովը, որ կազմուած էր Թիւրքիոյ հայերը ներկայացնող պատուիրակութենէն, ինչպէս նաեւ Կովկասի, Պարսկաստանի, Սիջազտքի, Սուրիոյ, Եգիպտոսի, Եւրոպայի եւ Միացեալ Նահանգներու գաղթականներու պատուիրակութիւններէն:

Հայոց Ազգային Պատուիրակութեան կողմէ հրաւիրուած այս համաժողովը աւարտեց իր աշխատանքները, փոխադարձ համաձայնութեամբ կազմելով հայերու բողոքներու ծրագիրը, գնահատեց պատճառուած վնասները եւ ստեղծեց յանձնաժողով՝ ապագայ Հայկական Պետութեան քաղաքական կարգավիճակի մշակման համար: Այն համատեղ աշխատեցաւ Հայկական Հանրապետութեան պատուիրակներուն հետ, որոնք կը բաղկանային Ա. Ահարոնեանէն,, Յ. Օհանջանեանէն եւ Մ. Բահաջեանէն, որոնց հետ միասնաբար կազմուեցաւ Հայաստանի Միացեալ պատուիրակութիւնը, որու լոզունգն էր «Միացեալ, ազատ եւ անկախ Հայաստան»՝ իր պատմական սահմաններուն մէջ»: Հայոց Ազգային համաժողովը եզրափակուեցաւ հետեւեալ յայտարարութեամբ. **Յանուն Արդարութեան, յանուն մեր բնական իրաւունքի, յանուն Ռուսիոյ եւ Թիւրքիոյ մէջ երկու հայկական հասարակութիւններու անդիմադրելի ձգտման, յանուն անփոխարինելի պատմական անհրաժեշտութեան, որ ուշ թէ շուտ պիտի յաթանակէ, մենք կը յայտնենք բացարձակ եւ յստակ միասնութիւնը նոյն ազգի երկու հատուածներուն:** Հայոց Ազգային համաժողովի որոշումներն ունեցան իրենց հետեւանքները, այդ եղաւ երբ Դաշնակիցներու Բարձրագոյն խորհուրդը դէ ֆակտո ճանչցաւ անկախութիւնը Հայկական Պետութեան, իր նշուած կառավարութեան անդամներով, 19 Յունուար 1920 թուականին: Այս օրը Արեւմտեան Հայաստանի պաշտօնական անկախութեան օրն է, ըստ հետեւեալ կէտերու.

Վերսայի մէջ կայացած Խաղաղութեան Վեհաժողովին Հայաստանի ներկայացուցիչներուն կողմէ յուշագրի պաշտօնական ներկայացումէն յետոյ **1919 թ.-ի Փետրուար 26-ին**, 1920 թ.-ի սկզբը, գլխաւոր դաշնակից պետութիւնները ճանչցան Հայկական Պետութեան կառավարութիւնը որպէս դէ ֆակտո կառավարութիւն:

1920 թ.-ի Յունուար 27-ին Խաղաղութեան Վեհաժողովի գլխաւոր քարտուղարութիւնը տեղեկացուց Հայաստանի ազգային պատուիրակութեան նախագահին, որ **1920 թ.-ի Յունուար 19-ի** նիստին Գերագոյն խորհուրդը կայացուց հետեւեալ երկու որոշումները.

Համաժողովին կողմէ ընտրուած նոր Ազգային պատուիրակութիւնը բաղկացած էր յարգարժան Պօղոս Նուբար փաշայէն, պրոֆեսոր Ա. ՏԵՐ-ՅԱԿՈԲԵԱՆԷՆ, Զ. ՆԵՐՍՐԱԳԷՆ եւ Կ. Փաստրմաճեանէն, Ա. ԶՈՐԱՆԵԱՆԷՆ եւ Վ. ԹԵՔԵՅԵԱՆԷՆ:

«1. Հայկական պետութեան կառավարութիւնը կը ճանչցուի որպէս դէ ֆակտո կառավարութիւն»;

«2. Այն, որ այս ճանաչումը չի նախատեսեր այդ պետութեան հնարաւոր սահմաններուն հարցը»:

Գլխաւոր քարտուղարը աւելցուց, որ ԱՄՆ-ի դեսպանը Յունուարի 26-ին տեղեկացուցեր է, որ «Միացեալ Նահանգներու կառավարութիւնը կողմ է այդ որոշման»:

Բացի այդ, 1920 թ.-ի Յունուար 28-ին Գլխաւոր քարտուղարութիւնը հայկական պատուիրակութեան նախագահին տեղեկացուց, որ Ֆրանսայի, Մեծ Բրիտանիոյ եւ Իտալիոյ կառավարութիւններու ղեկավարները միեւնոյն որոշումը ընդունելու են, որուն յաջորդեց մէկ այլ տեղեկութիւն, 1920 թ.-ի Մարտ 7-ին, ուր կը խօսուէր Ճապոնի դեսպանի յայտարարութեան մասին, «Ճապոնի կառավարութիւնը միացած է այն մտտեցման, որով Բրիտանիոյ, Ֆրանսայի եւ Իտալիոյ կառավարութիւնները ճանչցեր են Հայկական Պետութեան կառավարութիւնը որպէս դէ ֆակտո կառավարութիւն»:

Արեւմտեան Հայաստանի տարածքին Հայկական Պետութիւնը դէ յուրե ճանչցուեցաւ 1920 թուականի Մայիս 11-ին, երբ ան իր ստորագրութիւնը դրաւ Սեւրի պայմանագիրին տակ:

Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան

Պարոն Մակրոն, իսկ Ֆրանսան ե՞րբ պիտի՝ Հայ ազգին դէմ գործած իր դաւադրութիւններուն համար «ազգային օր» հռչակէ

Իրողութիւններ Ֆրանսայի «Հայկական ցեղասպանութիւնը յիշատակելու ազգային օր» հռչակելու մասին

Սկսինք նախ նշելով Ֆրանսայի՝ Հայ ազգին դէմ գործած դաւադրութիւններուն ամենակարեւորները.

1. Ան միշտ կը կրկնէ «**génocide arménien - Հայկական ցեղասպանութիւն**» եզրոյթը, մինչ ան լաւ գիտէ թէ ոչ բարոյականօրէն, ոչ իրաւականօրէն եւ ոչ իսկ լեզուականօրէն ճիշտ չէ Հայ ազգին դէմ գործադրուած ցեղասպանութեան ոճիրը բնութագրողի որպէս «**génocide arménien - Հայկական ցեղասպանութիւն**»: **Տեղասպանութիւնը զուտ ԹՐԶԱԿԱՆ Է**, իրականացուած Հայ ազգին դէմ: Կայ Հայկական իրաւունքներ, լեռնաշխարհի, մշակոյթ, պատմութիւն, լեզու, ազգ, երաժշտութիւն, գիտութիւն, արուեստ...եւայլն, **այս բոլորը Հայկական են՝ բայց ՈՉ ՏԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ**: Եւ սա անմեղ սխալ մը չէ:

2. Ան երբ կը խօսի ցեղասպանութեան մասին՝ կը նշէ միայն 1915-ը, առանց որեւէ անդրադարձի **1894-ԷՆ սկսեալ** այլ ցեղասպանութիւններէն, որոնք կիրառուեցան Արեւմտեան Հայաստանի եւ Կիլիկիոյ հայութեան դէմ, երբ հայութիւնը 300,000-է ավելի անմեղ զոհեր ունեցաւ: Սա ալ միամտութեան պտուղ մը չէ:

3. Իսկ համաշխարհային պատերազմի աւարտէն յետոյ՝ այսինքն Փարիզի վեհաժողովի կողմէ Հայաստան Պետութեան հանդէպ միջազգային, ներառեալ Ֆրանսայի, ճանաչումէն յետոյ, եւ Սեւրի խաղաղութեան դաշնագիրէն ու Ուիլսոնի իրաւարար վճիռէն յետոյ, **Ֆրանսայի եւ Անգլիոյ եւ ողջ «քաղաքակիրթ աշխարհ»-ի աչքերուն առջեւ՝ Հայ ազգին դէմ շարունակուող ցեղասպանութեան մասին ընդհանրապէս չի խօսիր Ֆրանսան**: Այդ ցեղասպանութիւնները շարունակուեցան **մինչեւ 1923, երբ Ֆրանսան Կիլիկիոյ եւ հայութեան պաշտպանութեան պատասխանատուութիւնը վերցուցած էր աշխարհին դիմաց**:

4. Ամբողջ Արեւմտեան Հայաստանի հայութիւնը լաւ կը յիշէ թէ ինչպէս «Հայերուն պաշտպան» Ֆրանսայի զօրքը **գիշերուայ մուփին լուր ու մունջ ՓԱՆՍԻ Կիլիկիայէն՝** Աթաթուրքի ուժերուն ներս խուժելու եւ հայերուն սպաննելու ապահով առիթ ընծայելու նպատակով:

5. Ֆրանսայի եւ Անգլիոյ զոյգ բանակները միասին՝ ցամաքային պատերազմի յատուկ ունակութիւններ ունեցող զինուորներ չունենալով, Հայկական Լեզին մը ստեղծելու համաձայնութիւն կնքեցին Պողոս Նուպարին հետ, որ պէտք էր **նախ կռուէր ու յաղթէր Արարայի ճակատագրական ցամաքային ճակատամարտը ու յետոյ ուղղուէր դէպի Կիլիկիայ ու այնտեղ կազմէր Հայկական իշխանութիւն ու այդ Լեզինը դառնար Հայաստան Պետութեան ազգային բանակին կորիզը**: Բայց Ֆրանսական բանակն ու կառավարութիւնը, յաղթանակէն յետոյ՝ Հայութեան տուին սին դատարկ **գովասանքի խօսքեր**, փառաբանելով Հայ մարտիկի խիզախութիւնն ու հզօրութիւնը, միւս կողմէ ստորագրեցին Անկարայի պայմանագրութիւնը Աթաթուրքին հետ (1921), ու **անոր յանձնեցին Կիլիկիան ու Կիլիկիոյ Հայութեան ճակատագիրը**:

6. 1923-ԷՆ անդին, Ֆրանսական կառավարութիւնները մեծ ջանքեր թափեցին տարագիր Հայութեան նկատմամբ, յատկապէս Սուրիայ եւ Լիբանան ապաւինած հատուածին, զայն հաւաքագրելու համար որպէս այդ երկիրներուն մէջ Ֆրանսայի շահերը պաշտպանող զործակալներ: Տասնամեակներ՝ միլիոնաւոր Ֆրանսական Ֆրանքներ տրամադրեցին այդտեղի **Հայութիւնը ապաքաղաքացնելու նպատակով**, որ անոնց միտքերով իսկ **Արեւմտեան Հայաստանի կամ Կիլիկիոյ ազատագրման հարցը չանցնի**: Ֆրանսական զաղտնի սպասարկութեան «երկրորդ բիւրոյ» կոչուած բաժնիկն մէջ բազմաթիւ հայեր հաւաքագրուած էին տոյն նպատակին համար: 1980-ական թուականներուն, ԱՍԱԼԱ-ին դէմ դաւաճանութիւններ կատարողներուն ոմանք Ֆրանսական զաղտնի սպասարկութեան տրամադրութիւններէն այդքանալ հեռու չ'էին:

7. **1987-ին** երբ Երոյնի իրադարձութիւնը Հայ ազգին դէմ կատարուած ցեղասպանութեան ճանաչման բանաձեւ կը պատրաստուէր ընդունիլ՝ Ֆրանսան մեծ դեր ունեցաւ ճանաչումի բանաձեւին մէջ, այդ ճանաչումի **քաղաքական եւ իրաւական բոլոր տեսակ բովանդակութիւնները վերացնելու նպատակով**, այն ինչը որ յաջողեցաւ իրականացնել ճանաչման փաստաթուղթի **երկրորդ յօդուածով**:

8. Ֆրանսան երբ Հայ ազգին դէմ կատարուած ցեղասպանութեան ժխտումը ընդունեց որպէս քրեական յանցագործութիւն, ան զործնականօրէն մեծ խոչընդոտ մը ստեղծեց ցեղասպանութեան մասին հանրային կարծիքին դիմաց քննարկելու եւ ցեղասպանութեան մանրամասները արծարծելուն առջեւ: Ո՛վ Ֆրանսային թելադրեց որ Հայութիւնը ինչոր մտահոգութիւններ ունի ցեղասպանութեան ժխտման հարցին նկատմամբ: Ընդհակարակը, հայերուն դէմ իրագործուած ցեղասպանութիւնը այնքան հաստատ եւ փաստացի հիմքեր ունի, որ ոչ մէկ ժխտում կրնար վնաս հասցնել այդ յստակ իրողութեան, այլ ժխտողական դրոյթները անգամ մը եւս առիթ պիտի հանդիսանային՝ Ֆրանսական հասարակութիւնը ավելի տեղեակ եւ լուսաբանուած դարձնելու համար:

9. 11 Նոյեմբեր 2018-ին, Ֆրանսան նշեց առաջին համաշխարհային պատերազմի աւարտի 100 ամեակը, որու պաշտօնական միջոցառումին իրաւիչեալներու **գլխաւոր ԲՍՏԱԿԱ-ն** Ֆրանսայի «դաշնակից» **Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան, Կիլիկիոյ եւ Հայկական Լեզինի ներկայացուցիչն էր**: Այլ ի՞նչ ցեղասպանութեան ազգային օրի, եւ ի՞նչ ճանաչումի մասին է խօսքը:

Արեւմտեան Հայաստանի Հանրապետութիւն

Ասոնք դեռ մէկ մասն են Արեւմտեան Հայաստանի հայութեան գիտակցութեան մէջ **ողջ մնացաց** Ֆրանսայի նկատմամբ դառն իրողութիւններուն:

Ֆրանսան այսօր, եւ յատկապէս այսօր, միջին արեւելքի մէջ տիրող աշխարհաքաղաքական ներկայ իրավիճակի յոյսին տակ՝ ուր Ֆրանսան եւ ընդհանրապէս արեւմուտքը **պատմական նահանջի մէջ է, եւ ահաւոր մեծ պարտութեան շեմին կանգնած է՝** իր կործանիչ արարքներուն հետեւանքով, **պէտք է սթափուի ու գլխու գայ:** Միջին արեւելքը, որտեղ Հայ ազգը տարածաշրջանի **գլխաւոր բնիկ ժողովուրդներէն մէկն է (եւ ոչ թէ Եւրոպային պատկանող ժողովուրդ մը)**, եւ տեղի այլ բնիկ ժողովուրդներուն անկեղծ եւ իսկական յարգանքը կը վայելէ՝ Ֆրանսային կողմէ նման պատեհապաշտ արարքները Հայ ազգի նկատմամբ, ոչ միայն Հայութեան զայրոյթը կը գրգռէ՝ այլեւ տարածաշրջանի այլ բնիկ ժողովուրդներուն, որոնց միջավայրէն ներս Ֆրանսայի համար գալիք քանի մը տասնամեակներուն **դժուար պիտի ըլլայ մտերիմներ ունենալ:**

Ֆրանսայի նախագահը, իր ներքին հարցերն ու խնդիրները, նաեւ **զուտ Ֆրանսական ընտրական իր սեփական հաշուարկներուն** մէջ Հայերու իղծերն ու ցաւերը պիտի չչարաշահէր, պիտի հայ ազգին դէմ կատարուած ցեղասպանութեան նկատմամբ Հայութեան զգացումները չչտեսնէր իր քաղաքական նշովիտ հաշուարկներուն համար: Ան կերելի տակաւին չէ անդրադարձած, որ **ներկայ օրերու Հայերը արմատական եւ որակականօրէն տարբեր են 1920-ի Հայերէն:** Ան երեւի չի գիտակցիր, որ **այսօր, Հայութեան ազգային արժանապատուութեան նկատմամբ որեւէ անպատշաճ մօտեցում՝ անպատասխան չի մնար:**

Յիշեցնենք Պարոն Մակրոնին, որ Հայերուն դէմ կատարուած ցեղասպանութեան սիւթը զգացական արարքներով շօշափելը՝ **Հայութեան իրաւունքներուն նկատմամբ անոր գիտակից հատուածին համար ոչ մէկ նշանակութիւն ունի:** Ըսէ՛նք թէ ինչու, ... այդ կ'ըսենք, որովհետեւ.

1. Ֆրանսան Հայերուն դէմ կատարուած ցեղասպանութեան ոճիրներուն նկատմամբ արդէն յստակ եւ կտրուկ կերպով **ճանչցած եւ արտայայտած է իր պաշտօնական դիրքը Նոյն 1915-ի Մայիսի 24-ին, Անտանտի Եռեակի Հռչակագիրով:**
2. Ֆրանսան (Թիւրքոյ հետ), 14 Հոկտեմբեր 1950-ին վաւերացուց **«Ցեղասպանութեան յանցագործութեան կանխարգիլման եւ պատժման Պայմանադրութիւն»-ը,** որու սահմանման մէջ կը նշուի, որ **Հայերու նկատմամբ թիւրքերու կողմէ իրագործուած ոճիրները ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ կը կոչուին:**
3. Ֆրանսան, Եւրոպական այլ պետութիւններուն հետ միասին, 1987-ին ընդունեց Եւրոխորհրդարանին կողմէ որդեգրուած բանաձեւը Հայերուն դէմ կատարուած ցեղասպանութեան մասին, անկախ անկէ, որ այդ ճանաչումը դատարկուած է իր քաղաքական եւ իրաւական բովանդակութենէն իր երկրորդ յօդուածով, այսինքն լոկ զգացական ճանաչում մըն է, որ **Հայ ազգին ոչ մէկ նպաստ կը բերէ միջազգային օրէնքին դիմաց:**
4. Ֆրանսական պետութիւնը 2001 թուականին նման զգացական ճանաչումով մը հանդես եկաւ, որ Նոյնպէս **իրաւական ոչ մէկ նպաստ կը բերէ Հայ ազգի իրաւունքներու վերականգման գործընթացին:**

Ուրումն, 1915-էն մինչեւ 2001-ը, Ֆրանսայի կողմէ **արտասանուած** այդ բոլոր զգացական **արտայայտութիւնները** մագաչափ իսկ

Արեւմտեան Հայաստանի Հանրապետութիւն

ան մէջ՝ ի նպաստ Հայ ժողովուրդի ազգային իրաւունքներու որ ի նպաստ Հայութեան պիտի արմատական փոփոխութիւն բերէ

Ֆրանսայի արտաքին քաղաքականութեան մէջ, ... **Պարոն նախագահ: Դուք կը հաւատա՞ք այս ստուին՝ զան Հայերուն հաւատացնելէ առաջ:**

Որպէս Արեւմտեան Հայաստանի Հայութեան իրաւունքներու վերականգման գործընթացի պատասխանատուութիւնները ստանցող **Հայկական քաղաքական իրապաշտ կողմ՝** Արեւմտեան Հայաստանի կառավարութիւնը, նկատի առնելով որ քաղաքական ասպարեզին մէջ ոչինչ վերջնական է, եւ որ քաղաքականութիւնը կը հաւատայ հնարաւորութիւններու իրականութեան, մենք պատրաստ ենք Ֆրանսայի պետութեան օգնութեան ձեռք երկարելու անկեղծ եւ իրապաշտ խորհուրդով մը, հետեւեալ ձեւով.

19 Յունուար 1920-ին միջազգայնօրէն, ներառեալ Ֆրանսայի պետութեան կողմէ ճանաչում ստացած **Հայաստան պետութեան իրաւականօրէն շարունակող պետութիւնը՝** այսօր Ֆրանսական պետութեան կ'առաջարկէ **հրապարակայնօրէն որդեգրել գործնական վերադարձ դէպի Փարիզի Վեհաժողովին եւ անկէ բխած Սեւրի խաղախութեան դաշնագրի իրագործման ուղիին,** հրակիրելով այդ դաշնագիրը ստորագրող բոլոր պետութիւնները՝ որդեգրելու Նոյն քայլը, **առաւել եւս յայտարարել Կիլիկիոյ վերաբերեալ՝ 1921-ի Անկարայի պայմանագրութեան վերջնական չեղարկումը:**

Միայն նման քայլն է, որով Ֆրանսական պետութիւնը այսօր **իսկական նորութիւն մը կրնայ բերել միջազգային ներկայ թնճուկային եւ տագնապալի վիճակին:** Այդ քայլը ոչ միայն պիտի լուծէ Միջին Արեւելքի ժողովուրդներու հիմնական խնդիրները, այլեւ պիտի արմատական լուծումներ բերէ նաեւ Ֆրանսայի, եւ ընդհանրապէս արեւմուտքի, ներկայիս խորքային տագնապներուն: Միջին արեւելքին, ներառեալ վերականգնուած Արեւմտեան Հայաստանի եւ Հայկական Կիլիկիոյ, մէջ **հաստատ եւ իսկական խաղաղութիւնն ու կայունութիւնը** այսօր, միակ երաշխիքը կը հանդիսանայ **ներկայ համաշխարհային անիմաստ եւ անհեռատեսական տագնապին:**

Սա մեր կողմէ ուղղուած **պատմական եւ լրջագոյն առաջարկն է, որ Ֆրանսան կրնայ այսօր ստանալ Հայութեան կողմէ, մնացածը ժամանակի վաճառք է, որտեղ Հայերս ոչ մէկ վարկան եւս ունինք վատնելու:**

Եթէ մեր ներկայ առաջարկին նպատակով այսօր **հանրաքուէ** տեղի ունենայ՝ ոչ միայն Ֆրանսայի, այլ ողջ Եւրոպայի հանրութեան կողմէ, վստահ ենք, որ ան **մեծամասնութեան հաւանութիւնը** պիտի ստանալ:

Արեւմտեան Հայաստանի Տարագիր Հայրութեան

ՄԻԱԺԱՄԱՆԱԿ ԸՆԹԱՅՈՂ ՅԱՌԱՋՈՒԹԱՅ ԵՒ ՅԵՏՆՈՒԹԱՅ



ՄԵՐԻ Գ. ՏԵՐՏԵՐԵԱՆ

Ռուսաստանի եւ Արեւելահայաստանի գոյութենական շահերը կը համընկնին Փանթուրքիզմի վտանգին դէմ: Ոչ մէկ հայ իրաւունք ունի մոռնալու կամ չգիտնալ ձեւացնելու այս աշխարհաստրատեգիական պատմական հոսանքներուն:

Ասիկա կը պատահի հակառակորդ ուժերու միջեւ, ուր մէկ կողմէն յառաջընթացին զուգահեռ՝ միւս կողմէն յետընթացը տեղի կ'ունենայ: Օրինակ՝ **Միաբեւեռ** եւ **բազմաբեւեռ** աշխարհա-կարգերու պարագան: Առաջինի նահանջին զուգահեռ, 21-րդ դարու առաջին քսանամեակին, երկրորդը յառաջընթաց կ'ար-ձանագրէր: Սակայն, պատմութեան ընթացքին դէմ գործող Երտողանեան թուրքիան ապրեցաւ զարտուղի զարգացում մը, երբ առաջին տասնամեակին զինք հովանաւորող Ամերիկեան Իմփերիալիզմը սկսած էր նահանջել, ինք վերելքի մէջ էր, եւ երբ իր թշնամի Փուլթինեան Ռուսաստանը՝ երկրորդ տասնամեակին՝ վերելքի մէջ էր, ինք վայրէջքի մէջ...: Ռոպիւտեւեւ «**հովին բերածը հովը կը տանի**», առաջին տասնամեակի Երտողանեան թուրքիոյ վերելքին պատճառը իր սեփական ուժը չէր, այլ՝ ամերիկ-եւսիոնական իմփերիալիզմին նեցուկը: Երբ այս նեցուկը առաւել տկարացաւ երկրորդ տասնամեակին, թուրքիան սկսաւ նա-հանջել:

Երտողանեան թուրքիան պատմութեան զարգացման դէմ կ'ուզէր քայլել՝ երագելով Նոր-Օսմանիզմ եւ Փանթուրքիզմ, որոնք միակ նեցուկը **Միաբեւեռ** աշխարհակարգը կրնար ըլլալ՝ ամերիկ-եւսիոնական իմփերիալիզմի հրամանատարութեան տակ, որ սակայն նահանջի մէջ էր, իսկ Փուլթինեան Ռուսաստանը՝ Փանթուրքիզմին թիւ մէկ թիրախը, յառաջընթացի մէջ...:

Ամէն հայ պէտք չէ մոռնալ թէ՛ Փանթուրքիզմի թիւ մէկ թիրախը Ռուսաստանն է, թիւ երկուրդ՝ Իրանը, իսկ միայն թիւ երեքը՝ Հայաստան, որ սակայն երեքին ամէնէն տկարն է եւ առաջնահերթը՝ սկսելու համար: Միւսինքն անգամ ժողովրդային Չինաստանն է թիւ չորս թիրախը, որն ապրող ուղղորդներուն պատճառով: Ուրեմն, մենք բախտաւոր ենք, որ Ռուսաստան, Իրան եւ ժողովրդային Չինաստան ալ թիրախներն են Փանթուրքիզմին: Այսինքն՝ Փանթուրքիզմին հզօր հակառակորդները, հետեւաբար ալ՝ Փանթուրքիզմի վտանգին դէմ հայրութեան բնական դաշնակիցները: Իսկ Փանթուրքիզմի ծրագիրը թուրքերու ինքնապատիկէն չի բխիր, այլ՝ զայն մշակած են սիոնական հրեայ իինգ պատմաբաններ, գործածելով թրքական ծածկանուններ (Թեքին Ալի, Մուրատ Էֆենտի, Մուսթաֆա Ճէլալետտին Փաշա...), առ ի ծառայութիւն Արեւմուտքի դէպի Արեւելք ծաւալելու ծրագիր ունեցող ծաւալողապաշտ հզօր տերութիւններուն: Ուրեմն, Փանթուրքիզմի հեռանկարը կախեալ է՝ ոչ թէ թուրքիոյ ուժէն, այլ՝ Արեւմուտքի ուժէն եւ Արեւելքի յիշեալ թիրախներու ուժէն...: Եւ ոչ ալ՝ Սիոնիզմի (Իսրայել) ուժէն: Թուրքիա եւ Իսրայել պարզապէս **ծածկոյթներ** են Արեւմուտքի ծաւալողապաշտ ուժերուն: Այս ծրագրի **առաջին քայլը**՝ թուրքիոյ եւ Ազրպէյճանի միջեւ, **ցամաքային անմիջական կապին ստեղծումն է**, այս ճամբէն **վերացնելով Հայաստանի խոչընդոտը** (Արեւմտահայաստանը արդէն զաւթուած է, կը մնայ Արեւելահայաստանը): Եւ այս է պատճառը ռուսական ռազմախարհիսին գոյութեան՝ Արեւելահայաստանի թուրքիոյ հետ սահմանագիծին վրայ՝ **պաշտպանելով Արեւելահայաստանի գոյութենական վերին շահը**, պաշտպանած ըլլալու համար **Ռուսաստանի ալ գոյութենական վերին շահը**, քանի որ Ռուսաստանի եւ Արեւելահայաստանի գոյութենական շահերը **կը համընկնին** Փանթուրքիզմի վտանգին դէմ:

Ոչ մէկ հայ իրաւունք ունի մոռնալու կամ չգիտնալ ձեւացնելու այս աշխարհաստրատեգիական պատմական իրականութիւնը:

...

Ներկայիս, «**Գահընկեց Սուլթան**» Երտողանի իշխանութեան կարգավիճակը նախանձեղի չէ՛ ներքին, շրջանային եւ միջազգային հարթակներու վրայ: Ան կ'ապրի **շատ ցուրտ մեկուսացում մը**, որ իրեն կը ստիպէ ապաստանելու Փուլթինի ամփոփանիին տակ... Եւ, ի վերջոյ՝ կատարելու անոր կամքը, քանի որ Փուլթինի հետ յարախաղացութիւնը, առնուազն, **հեշտ չէ...**, մասնաւորաբար ռուս-թրքական պատմական արիւնայի անցեալին պատճառով, մանաւանդ անոր համար որ յեղափոխական Ռուսաստանն էր, որ Փանթուրքիզմի (Մեծն թուրան) ծրագիրը՝ **Ներսէն խափանեց**, 1917-1923 տարիներուն, ջախջախելով Էսվերի գլխաւորած Պասմաչիական շարժումը (Էսվերը զգեստնողը հայ կարմիր բանակային մըն էր) եւ Կեդրոնական Ասիոյ բոլոր թրքացեղ եւ թրքալեզու ժողովուրդներէն իւրաքանչիւրին **անջատ սահմաններով երկիր մը յատկացնելով**: Այդպիսով, անկարելի դարձնելով անոնց **միաւորումը** «Մեծն թուրան»ի փանթուրքական ծրագրին մէջ: Եւ Փուլթինի հովանին Երտողանէն կը պահանջէ դուրս գալ՝ **հակառուսական ՕԹԱՆ-էն**, հրաժարիլ **հակառուսական** Փանթուրքիզմէն, վերջնապէս խզուիլ՝ ամերիկեան CIA-ի գործակալ Իսուան Մուսլիմիներու կազմակերպութենէն ու չգործակցիլ՝ ամերիկեւսիոնական իմփերիալիզմի դաշնակից երկիրներուն հետ, բոլոր ցամաքամասերուն մէջ... Եւ՝ հրաժարիլ նաեւ Նոր-օսմանիզմէն, որուն բուն հեղինակը դարձեալ թուրքերը չէին, այլ՝ ԱՄՆ-ի նոր-պահպանողականները (Neo-cons), որոնք սարքեցին 11 Սեպտեմբերի (2001) անհաւատալի միջազգային ահաբեկչական գործողութեան հոլիվուտեան բեմադրութիւնը...: Ֆրանսացի լրագրող Thierry Meyssant-ի փաստաթուղթերով հաստատուած, Պին Լետընի ղեկավարած Ալ-Զա'իտան ամբաստանելով... Եւ միւս կողմէ՝ Երտողանի AKP կուսակցութիւնը առաջ քաշեցին, որպէս Պին Լետընի ծայրայեղ ճիւղատակական իսլամի հակադրուող «**չափաւորական իսլամ**»ի օրինակելի տիպար, որպէսզի Երտողանի գլխաւորութեամբ վերականգնի Օսմանեան Կայսրութիւնն ու Խալիֆայթը... անոր ենթարկելու համար համայն Արաբ եւ Իսլամ աշխարհը...: Երտողանի աջ բազուկը պիտի ըլլային Իսուան Մուսլիմիները:

Ուրեմն, 21-րդ դարի առաջին քսանամեակի առաջին տասնամեակին «**Սուլթան**» Երտողան եւ իր AKP կուսակցութիւնը՝ ամերիկեւսիոնական **push-up-ով** եւ քաղաքատնտեսական **սուտ քարոզչութեամբ**, ոչ միայն իշխանութիւնը գրաւեցին թուրքիոյ մէջ, այլեւ՝ մեծ հեղինակութիւն շահեցան նախկին Օսմանեան Կայսրութեան մաս կազմող Արաբ Իսլամ երկիրներուն մէջ, նոյնիսկ՝ Սուրիոյ մէջ... անփորձ Պաշշար Ասատի աններելի **քաղաքական ու տնտեսական երկու խոշոր սխալներուն հետեւանքով**. «Տիւրքիսեան Փրոթըքլներ»ուն նման **անպայ-մանադիր** (Իսկէստերուսի զաւթումը մոռնալով) **բացուիլը թուրքիոյ հանդէպ**, եւ՝ **նոր-ազատական, շուկայական տնտեսութեան որդեգրումը**, որ սնանկացուց Սուրիոյ արդիւնաբերութիւնն ու երկրագործութիւնը, բարձրացուց Սուրիոյ գործազուրկներու թիւը եւ աղքատացուց ժողովուրդը, ու հողը պատրաստեց 2011 թ. նախայարձակումին:

21-րդ դարի երկրորդ տասնամեակի առաջին կեսին «**Արաբական Գարուն**» կոչուած ամերիկեւսիոնական յեղաշրջումներու այիքը սկսաւ թուրքիսեւ, տարածուելու համար Եգիպտոսի, Լիպիոյ, Շմէնի եւ Սուրիոյ մէջ, իշխանութեան գլուխ

Արեւմտեան Հայաստանի Տարագիր Հայրութեան

բերելով Թուրքիոյ եւ Եգիպտոսի հիսուան Մուսլիմները, քաղաքացիական պատերազմներ հրահրելով Լիպիոյ եւ Եմենի մէջ, եւ համաշխարհային յետադիմութեան ահաբեկչական պատերազմ շրջապագրծելով Սուրիոյ դէմ: Առաջին կէսին, Էրտողան գինովցած էր այս կայծակնային արագութեամբ յաջողութիւններէն եւ Պաշտար Ասատի տապալումին օրերը կը հաշուէր: Սակայն, երկրորդ տասնամեակի երկրորդ կէսին, Էրտողանի իրավիճակը գլխավոր շրջուեցաւ ձախողութիւններու պատճառով եւ «**Գահընկեց Սուլթան**»ը մտաւ Փութինեան Ռուսաստանի ամպիովակիին տակ՝ մեկուսացուած ըլլալով բոլոր երեք հարթակներու վրայ,– ներքին, շրջանային եւ միջազգային, որուն ցուցանիշներէն են՝ ոչ միայն Գերմանիոյ եւ Վատիկանի պաշտօնական հնչեղ ճանաչումը Հայոց Ցեղասպանութեան, այլեւ՝ այն լուրը, թէ յառաջիկայ Ապրիլի 24-ին, Արաբ-Իսլամ աշխարհին՝ Միացեալ Արաբ Էմիրութիւնները (որոնք արդէն «Սոյուզ 25» տիպի ռազմական օդանւեր կը գնեն Ռուսաստանէն) պիտի ճանչնան Հայոց Ցեղասպանութիւնը... ոչ թէ որպէս **հայանպաստ** կեցուածք, այլ՝ առաւելաբար որպէս **հակա-Էրտողանեան** դիրքորոշում...: Մեկուսացուած է երկրի ներսը, գրեթէ բոլոր ազգի եւ կրօնքի ժողովուրդներէն, եւ նոյնիսկ ԱԿՔ կուսակցութեան նախկին պատասխանատուներէն: Մեկուսացուած է Արաբ-Իսլամ աշխարհէն, որուն ցուցանիշը եղաւ իր կազմակերպած Իսլամական Գազաթաժողովին ձախողութիւնը, երբ իսլամ պետութիւններու ղեկավարներուն ջախջախիչ մեծամասնութիւնը բացակայեցաւ...: Մեկուսացուած է միջազգային հարթակի վրայ՝ թէ՛ Եւրոպայէն եւ թէ՛ ԱՄՆ-էն... իր ձախողութեան պատճառով եւ ոչ թէ անոնցմէ հեռացած ըլլալուն համար...: ԱՄՆ-ի նախագահը, ամերիկեան ոճի փրակմաթիւքով իրեն ըսած է. **“Now, you are good for nothing”** (So լաճ անպիտան): Էրտողան հասած է այն ստոր դիրքի, որ 3-րդ անգամ ըլլալով, Փութինէն խնդրած է Պաշտար Ասատի հետ հանդիպում մը կարգադրել: Փութին մերժած է, ըսելով թէ՛ տակաւին ժամանակը չէ հասած ատոր. Սուրիոյ մէջ քու հոսեցուցած արիւնդ տակաւին չորցած չէ: Էրտողան նոյնիսկ հիմա կ'աշխատի երկրէն հեռացնել հիսուան Մուսլիմի երեկի իր գինակից ղեկավարները...: Օրինակ՝ հաշտուելու համար Եգիպտոսի նախագահին հետ (որուն թշնամացած էր իսլամաճի Մուհամետ Սուրիի իշխանութիւնը տապալած ըլլալուն համար), բռնի կերպով Սիսիին յանձնած էր անոր պահանջած իսլամաճի ղեկավարներէն Մուհամետ Ապտուլհաֆիզ Հիւսէյնը, եւ կը շարունակէ իսլամաճի քստրեմ ձեռքարկելը, գանձելը **կասկածելի** տարրեր նկատելով՝ որպէս Ապտալա Կիլէնի գործակալներ... վախճալով որ հիսուան Մուսլիմները՝ CIA-ի ղեկավարութեամբ կրնան **իրական** պետական յեղաշրջում մը կատարել եւ զինք բանտարկել...: Որովհետեւ Էրտողան գիտէ, թէ ինք Թրամիի ակնոցով, «մանր վարձկան» մըն է միայն, ինչպէս բացայայտեց Պաշտար Ասատ, իր Կիրակի, 17 Փետրուար 2019-ի պատմական ելոյթին մէջ, եւ՝ կրնայ պատժել զինք, քանի որ ձախողեցաւ Սուրիոյ մէջ եւ դարձաւ անպետ «**մանր վարձկան**»:

Ուրեմն, **ենթադրական** ոլորտի «Սուլթան» Էրտողան, հիմա՝ ինքզինք **գահընկեց** կը զգայ, եւ ապաստանած ըլլալով Փութինի շուքին տակ, ստիպուած է տալու **Էութենական** որոշումը՝ հրաժարելու ՕԹԱՆ-էն, Փանթըրքիզմէն ու Նոր-Օսմանիզմէն (իմա՝ **Սուլթանութենէն** ու **Խալիֆաթութենէն**): Այսինքն՝ մոռնալ իր անցեալին փայլայայտ **հակապատմական** (պատմութեան ուղղութեան հակառակ ուղղութեամբ ընթացող) երազները, քանի որ հին, արդէն իր վերջին հոգեվարքը ապրող **միաբնէն** աշխարհակարգին **արտօնած** այդ ծաւալողապաշտ երազները, այսօր՝ Նոր, **բազմաբնէն** աշխարհակարգին մէջ, ոչ միայն **արտօնուած չեն**, այլեւ՝ **անկարելի** դարձած են: Եւ ուրեմն, վերապրելու համար, Էրտողան պետք է **ուրանայ** իր անցեալը:

Ենթադրական «Սուլթան»ի փաստական գաղնկեցութիւնը եւ անոր պատեհապաշտական, **քամելիոնական** մերձեցումը Փութինի Ռուսաստանին, առումով մը՝ **Նպաստաւոր** եւ միաժամանակ ուրիշ առումով մըն ալ՝ **աննպաստ** կրնայ ըլլալ մեր ազգային վերին շահերուն համար:

Փանթըրքիզմի սպանալիքին առումով՝ **Նպաստաւոր** է: Բայց

մեր հողային դատին առումով՝ **կրնայ աննպաստ ըլլալ, մանաւանդ եթէ** Արեւելահայաստանի իշխանութիւնները **փորձեն կապել** Գ. Հանրապետութեան օլիգարխներու «**կոմպլեմենտար**» քաղաքականութեան **լարախաղացութիւնը**: Եթէ՛ Էրտողանին արգիլուած է **լարախաղացութիւնը Փութինի հետ**... այդ մէկը՝ **շատ անելի խստօրէն արգիլուած է Հայաստանին**:

Անշուշտ, կարելի չէ կտրականօրէն ենթադրել թէ հաւանական է Էրտողանի հրաժարումն ու խզումը իր փառասիրութենէն, կամ թէ՛ ան կարողութիւնը ունի զարթելու՝ Սուլթանի Պալատին ու Խալիֆաթի ադամանդակուռ թագի պատկերներուն իր երկարատեւ ենթարկուածութեան պատճառած **քնեածութենէն**, որպէսզի այդ քնեածութիւնը չվերածուի **մահացունի**...:

Կարելի չէ նաեւ ենթադրել թէ՛ Փութին, Էրտողանէն իր պահանջներէն, որոնք **հրամայական** պիտի նկատէ, եւ որոնք **սակարկելի**, եւ թէ՛ մեր հողային դատն ու «Ղերբտ Թուրքահայաստանի մասին»ը հրամայական են, թէ՛ սակարկելի...: Բայց հայրութեան համար ամենէն **կարեւորն ու առաջնահերթը** այն հարցումն է, թէ **մենք ի՞նչ պետք է ընենք, եւ ի՞նչ պետք չէ ընենք**, որպէսզի՝ Փութինը համոզուի, որ Ռուսաստանի ալ ազգային վերին շահերուն տեսակէտէն, մեր հողային դատն ու Թուրքահայաստանի անկախութեան մասին **ռուսական** ղեկերը **հրամայական** պահանջներ են:

Եթէ մենք ծուլանաք ու ձեռնպահ մնանք եւ չկատարենք մեզմէ պահանջուածը, ներկայի այս ոսկի առիթն ալ պիտի կորսնցնենք ստուգապէս:

Մեզմէ կը պահանջուի նախ՝ Փութինի մօտ ստեղծել համոզում թէ մենք Ռուսաստանի **հաւատարիմ բնական դաշնակիցն ենք** եւ չենք հաւատար **կոմպլեմենտար** քաղաքականութիւն կոչուող **աբսուրդին** եւ **բացարձակ անկախութեան**, մեր ազգային աշխարհաստրատեգիական շահերը **իրարու կը համընկնին**, հետեւաբար ալ՝ **փոխադարձ կախեալութիւն մը ունինք իրարմէ**, եւ՝ **զիրար զօրացնելու** պարտաւորութիւն մը...: Ապա՝ Փութինի յիշեցնել, թէ՛ **Արեւելահայաստանի զօրացումը Արեւմտահայաստանի հետ միացումով**, աշխարհաստրատեգիական **անհրաժեշտութիւն մըն է** Փանթըրքիզմի վտանգին դէմ. **վտանգ մը**, որ **հաստատուն** մըն է (constant) եւ **չի վերանար** Էրտողանի հազար երդումով թէ կը հրաժարի անկէ:

Փանթըրքիզմի ծրագիրը **հաստատուն** մըն է՝ Արեւմուտքէն դէպի Արեւելք տարածուիլ ծրագրող որեւէ տերութեան համար: Այդ ծրագիրը որդեգրուեցաւ յաջողաբար՝ Գայգերական եւ Նախակական Գերմանիոյ եւ Ամերիկեան Իմպերիալիզմին կողմէ:

Հուսկ՝ Փութինի ուշադրութեան յանձնել այն, որ 2019 եւ 2020 թուականները դարադարձերն են Վերսայի Վեհաժողովին, Սելրի դաշնագրին եւ Ու. Ուիլսոնի Իրաւարար Վճիռին: Ազգերու ազատ ինքնորոշման իրաւունքը գրեթէ միաժամանակ պաշտպանած են Ու. Ուիլսոնի եւ Վատիմիր Ի. Լենինը: Ուիլսոնը արձակած է Իրաւարար Վճիռը Հայաստանի սահմաններուն մասին, եւ Ռուսաստանը հրատարակած է Արեւմտահայաստանի Անկախութեան Դեկրետը:

Ուրեմն, ԱՄՆ-ի եւ Ռուսաստանի նախագահները, որոնք յայտնօրէն ունին գաղտնի համաձայնութիւններ աշխարհաքաղաքական հարցերու շուրջ, եւ ճշդած են իրենց սահմանագիծերը եւ ԱՄՆ-ի նախագահը այլեւս պաշտպանը չէ «**ոչ պիտանի**» դարձած Էրտողանին, երկու նախագահները կրնան միասնաբար պահանջել գործադրութիւնը Սելրի Դաշնագրի Հայաստանի վերաբերող յօդուածներուն եւ Ու. Ուիլսոնի 22 Նոյեմբեր 1920 թուականի Իրաւարար Վճիռին:

Այս աշխատանքը կը ծանրանայ Արեւելահայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանի եւ Արեւմտեան Հայաստանի իրաւականօրէն շարունակուող պետութեան նախագահ Արմենակ Աբրահամեանի ուսերուն վրայ:

Միջազգային Օրէնք

Հայաստանի Հանրապետութեան 23 Օգոստոս 1990-ի անկախութեան հռչակագիրը եւ Արեւմտեան Հայաստանը

Պետութեան մը անկախութեան հռչակագիրը՝ իր հիմնադրման գլխաւոր հիմքն է: Ան կը բնութագրէ պետութեան ինքնութիւնն ու ելութիւնը: Ան փոփոխութեան ենթակայ չէ:

Մինչ սահմանադրութիւնը՝ օրէնսդրական կարգաւորութիւն մըն է՝ ընդունուած տուեալ պետութեան ժողովուրդին կողմէ, եւ ենթակայ է փոփոխութիւններու նոյն ժողովուրդի նախընտրութեամբ եւ համաձայնութեամբ, բայց ան միշտ պետք է համահունչ ըլլայ տուեալ պետութեան անկախութեան հռչակագիրին հետ, քանի որ հռչակագիրը սահմանադրութեան մշակման հիմքն է, հետեւաբար սահմանադրութիւնը եւ անոր հիման վրայ ընդունուած որեւէ այլ օրէնք չի կրնար հակասութեան մէջ մտնել պետութեան անկախութեան հռչակագիրին հետ, կամ հակադրուիլ անոր սկզբունքներուն:

23 Օգոստոս 1990 թուականի Հայաստանի Հանրապետութեան անկախութեան հռչակագիրը կը բաղկանայ 12 կէտերէ, որոնց միայն նախապերջին (11-րորդ) կէտին մէջ է որ Հայոց ցեղասպանութիւնն ու Արեւմտեան Հայաստանը կը յիշուին, այդ ալ միայն ցեղասպանութեան ճանաչման գործին «սատար կանգնելու» արտայայտութեամբ:

Հայաստանի Հանրապետութեան անկախութեան հռչակագրի Յօդուած 11-ը


«Յօդուած 11. Հայաստանի Հանրապետութիւնը սատար է կանգնում 1915 թվականին Օսմանյան Թուրքիայում և Արևմտյան Հայաստանում հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործին:»

Հայերէն լեզուի արմատական բառարանը, «Սատարել» բայը կը բացատրէ որպէս «**օգնել, օգնական լինել, յորդորել**»: Այսինքն, գործունէութեան մը կողմնակի եւ մասնակի կերպով օգնել եւ քաջալերել, բայց երբեք չի նշանակեր «**գործունէութիւնը ղեկավարել կամ յանձնառու պատասխանատուութիւն վերցնել**»:

Հայոց դէմ կատարուած ցեղասպանութեան պարագային, իրաւաքաղաքական իմաստով, Հռչակագիրին մէջ գործածուած բառը շատ ճիշդ է: Որովհետեւ, Հայոց ցեղասպանութեան ոճիւրդ կիրառուած է Արեւմտեան Հայաստանի մէջ (ինչպէս նաեւ կը հաստատէ նոյն յօդուած 11-ը) եւ կիրառուած է Արեւմտեան Հայաստանի ժողովուրդին դէմ, որոնք ըստ միջազգային օրէնքի սկզբունքներուն՝ միայն իրենք են որ ունին Միջազգային հանրութեան օրէնքի ենթակայի (Sujet-ի) կարգավիճակը: Հետեւաբար, Արեւելեան Հայաստանը կրնայ միայն ՍԱՏԱՐԵԼ այն բոլոր գործունէութիւններուն որոնք առնչուած են ցեղասպանութեան եւ բռնի տեղահանման՝ թէ ճանաչման եւ թէ ալ իրաւունքներու վերականգման ու իրագործման հարցերուն հետ:

Միւս կողմէ, Յօդուած 11-ը նաեւ կը նշէ ցեղասպանութեան վայրը «**Օսմանյան Թուրքիայում և Արևմտյան Հայաստանում**»: Այս հատուածը յստակ բառերով կը տարանջատէ եւ կը զանազանէ Օսմանեան Թիւրքիան Արեւմտեան Հայաստանէն որպէս երկու տարբեր քաղաքական եւ իրաւական ինքնութիւններ, այսինքն կը ճանչնայ Փարիզի խաղաղութեան վեհաժողովէն բխած Արեւմտեան Հայաստանին վերաբերող իրաւական բոլոր հիմքերը՝ սկսած 1920-ի Յունուար 19 -էն մինչեւ Նոյեմբեր 22-ն:


Հայաստանի Հանրապետութեան անկախութեան հռչակագրի Յօդուած 11-ի այս երկու հանգամանքները այսօր պետք է որպէս հիմք հանդիսանան հայ հասարակութեան համար, ճիշդ ձեւով ընկալելու՝ Արեւելեան Հայաստանի եւ Արեւմտեան Հայաստանի հանրապետութիւններու իրաւական կարգավիճակներու տարբերութիւնները, եւ ըստ այնմ զանազանել՝



LA QUESTION ARMÉNIENNE Devant la Conférence de la Paix (12 - 26 février 1919) «Հայկական հարցը Խաղաղութեան Վեհաժողովի Ժամանակ»

ԼՈՅՍ ՏԵՍԱՐԻ ԱՐԵՒՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՅ ԱՐՄԵՆԱԿ ԱՐԲԱՀԱՍԵԱՆԻ ԳԻՐԸ

Փետրուարի 22-ին՝ Փարիզի մէջ տեղի ունեցաւ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան նախագահ Արմենակ Աբրահամեանի «**Հայկական հարցը Խաղաղութեան Վեհաժողովի ժամանակ**» գիրքի շնորհանդէսը: Այս նոր գիրքը անելի ման-րամասն եւ համակարգուած ձեւով կը ներկայացնէ Հայկական հարցը, Արեւմտեան Հայաստանի իրաւական կարգավիճակը եւ դաշնակից տերութիւններու դիրքորոշումներն ու ընդունած որոշումները:



ԱՐՄԵՆԱԿ ԱՐԲԱՀԱՍԵԱՆԸ ԵՒ ԿԻԼԻԿԻԱՆ ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼԵԻ ԻՆՔՆԻՇԻԱՆՈՒԹԵԱՆ, ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ԵՒ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԲԱՆԱԿԻՆԵՐՆ ԵՆ

Այս ամբողջական գործը լոյս պիտի տեսնէ Պեյրուսի մէջ 24 Ապրիլ 2019-ին, նուիրուած Միջին Արեւելքի ժողովուրդներու եւ պետութիւններու ուշադրութեան:

Գիրքի հեղինակ՝ Գառնիկ Սարգիսեան
Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Վարչապետ

Մարդկութեան եւ Հայոց Պատմութիւն



ՄՈՎՍԵՍ ՆԱՃԱՐԵԱՆ
Արեւմտեան Հայաստանի
Կրթութեան եւ Գիտութեան Նախարար

Մեզմէ մօտ 380000 տարի առաջ տեղի ունեցած ջրհեղեղէն ետք ջուրերը արագօրէն իջեր են ծովի մակարդակին, եւ այդ ամայացած հողերը բնակեցնելու եւ մշակելու խնդիրը յառաջացեր է: Նոյ-Ծուռ Դաւութի առանջնեկ (սեմ) որդի Փոքր Սիւրը, որ կոչուեր է Չրուան, իր պապ Արամագո-Առիւծ Սիւրի գիտելիքներով զինուած՝ նախաձեռնել է նոր տեսակ մարդկանց արարումը նորաբոյս Արարատ լեռան ստորոտին փորուած քարանձաւային փորձակայանին մէջ, որ յետոյ կոչուեր է Յոլակերտ բնակատեղի: Մարմինները ձեւաւորելէ ետք, բարձրացուցեր է զանոնք Արարատի գագաթը, եւ անոնց համար տիեզերքէն ստացեր է կենսատու Ահուր-աւուրան:

Առաջին կեանքի կոչուածը եղեր է սեւամորթ-երկաթագոյն, երկրորդը «դեղնամորթ»-արծաթագոյն, երրորդը «կարմրամորթ»-պղնձագոյն:

Չանոնք իջեցուցեր է Արարատին մօտիկ Նախճաւանի դաշտ, ուր նախ անեցուցեր-բազմացուցեր է զանոնք եւ ապա իւրաքանչիւրին իր ֆիզիկական բնութագիրին յարմար տեղեր փոխադրեր ու բնակեցուցեր է, ինչպէս «դեղնամորթ»-արծաթագոյնները տարեր է Չինաստանի կողմը, սեւամորթ-երկաթագոյնները Հնդկաստան ու Ափրիկէ, իսկ «կարմրամորթ»-պղնձագոյնները ներկայիս Ամերիկեան կոչուող ցամաքամաս:

Անոնց վրայ ուսուցիչներ կարգեր է Հայկական լեռնաշխարհի մէջ մինչեւ ջրհեղեղ 770000 տարի ապրած ցորենագոյն Ադամորդիներէն, որ անոնց սորվեցնեն լեզու, մշակոյթ եւ կենցաղավարութիւն:

Այս երեւոյթին մասին է որ կը խօսի մեր պատմահայր Մովսէս Խորենացին, ըսելով, թէ Մեւ-Փոքր Սիւրի կրտսեր որդի Տարբանը, որն հիմներ է Տարօնը, իր կրտսերագոյն որդիին տարեր է Բակտրիա (Չինաստանի կողմերը), հոն ձգեր է զայն ու վերադարձեր է: Կը պարզուի, որ տարեր է որպէս ուսուցիչ:

Այս աշխատանքներէն յետոյ, Փոքր Սիւր-Չրուան-Օգիրիսը մտածեր է երկրի եւ արարուած մարդկանց ապագային մասին:

Ան գիտեր, որ մեծ ջրհեղեղէն 200500 տարի անց երկիր մոլորակին պիտի սպառնար լիակատար սառցապատում:

Այդ պատճառով ալ ան գործի անցեր է ամբողջ ցամաքի ընդերքին փորելով բնակատեղիներ, զանոնք անցումներով իրարու կապելով, եւ ապահովելով խմելու ջուրով, օդով եւ սնունդի արտադրութեամբ:

Ահա այսպիսի հսկայածաւալ, կարելի է ըսել տիտանական աշխատանք տարեր է մեր Փոքր Սիւրը, եւ երբ սառցապատուեր է երկիր մոլորակը մեզմէ 15,168 տարի առաջ (մ.թ.թ.2010 թ.ի հաշուառնով), ամբողջ մարդկութիւնը անցեր է ընդամասնակ, եւ կարողացեր է շարունակել իր կենսագործունեութիւնը:

Այն հսկայ կենդանիները, մամուլթները, որ գտնուած են սառած վիճակի մէջ, այդ սառցապատման հետեւանքով անհետացեր են երկրի երեսէն:

Մեզմէ մօտ 130000 տարի առաջ սկսեր է սառոյցներու հալոցքը: Ահա ասոր կ'ակնարկէ Աստուածաշունչ Մատեանը, երբ կ'ըսէ, թէ դուրս եկան մարդիկ (քարանձաւներէն – Մ.Ն.) եւ իջան

Սեւարի դաշտավայրը, ուր որոշեցին աշտարակ կառուցել (Բաբելոնի աշտարակը), որպէսզի փրկուին գալիք յաջորդ ջրհեղեղէն:

Ահա այս մարդկանց մասին է, որ պատմաբանները թիրիմացաբար կ'ըսեն «քարանձաւային մարդիկ»:

Մեր պատմահայր Մովսէս Խորենացին հակիրճ, բայց շատ կարեւոր տեղեկութիւն կ'ուտայ Բաբելոնի աշտարակաշինութեան հանգամանքներուն մասին:


Ան կ'ըսէ, թէ մինչեւ Բեյի գործունեութիւնը, հսկայազուններէն ոմանք փորձեր են մենաստիղութիւն հաստատել բոլոր հսկաներուն վրայ, բայց Հայկի որդեգրած կեցուածքին հետեւանքով՝ բոլորն ալ ձախողեր են: Այսինքն Հայկը ընդդիմացեր է, որովհետեւ բոլոր հսկաներն ալ հաւասար էին իրարու իրենց ծագումով:

Սակայն Բեյն իր խորամանկութեամբ՝ կոցեր է իր կողմ թեքել հսկաներէն շատերուն: Ան հանդէս եկեր է առաջարկութեամբ, որ բազմացած մարդկանց որդիներուն (որոնք տիեզերածին կամ հսկայազուն չէին) վաճառեն աշխարհի տարբեր վայրերու մէջ փրկուած այլ հսկայազուններու: Սա կը նշանակէ, որ բնիկ մարդկանց պիտի տեղահան ընէին, ու հեշտութեամբ եկամուտ պիտի ապահովէին:

Հայկը ընդդիմացեր է այս ծրագիրին, բայց հսկաներուն մեծամասնութիւնը թեքուեր է Բեյի կողմը, որովհետեւ շահ պիտի ապահովէին: Հայկը ստիպուեր է հեռանալ Բաբելոնէն, եւ վերադառնալ իր պապերու բնակութեան վայրը, Հայք:

Տիգրիսն ի վեր բարձրանալով, ան հասեր է Հայքի առաջին բարձունքներուն, եւ այնտեղ կառուցեր է առաջին ասանը, զոր յանձներ է իր թոռ Կադմոսին, անոր պատուիրելով որ ան աջալոջօրէն հետեւի հարաւէն սպասուող վտանգին:

Հայկ նահապետը Կադմոսի բնակավայրին անունը կնքեր է Փիւնիկէ, իսկ անոր շրջակայ տարածքը կամ գաւառը՝ Կադմոսը կոչուեր է Ծաղեք: Սա այն Փիւնիկէն է, ուր գացեր է Սուրբ Մեսրոպ Մաշտոց, այբուբենի հարցերով: Միջնադարուն ան անուանափոխուեր է Փիւնկայի կամ Փիւնիկի (Տես՝ Պատկեր «24»):



Փիւնիկէ-Փիւնկան՝ Կադմոսի բնակատեղին
Պատկեր «24»

Հայկ նահապետը Կադմոսին Փիւնիկէի մէջ ձգելով բարձրացեր է Հայք, ուր իր նախահայրերը ապրած էին:

Պէտք է ըսել, որ Հայքը եղած է ցամաքի կառավարման առաջին կեդրոնը, եւ աստղագիտականօրէն կը համապատասխանէ Կառավար (Auriga) համաստեղութեան երկրային առաջին պատկերին (Տես՝ Պատկեր «25»), եւ Հայոց այբուբենի «խ» տառին, որպէս կեդրոն:

Բեյը քանի մը անգամ պատուիրակներ ուղարկեր է Հայկի մօտ, անոր խոստանալով բարձրագոյն պատիւ ու դիրք, սակայն Հայկը մերժեր է:

Հայկը ի՛նչ կարեւորութիւն ունեցեր է Բեյի համար, որ ան

Կրթութիւն եւ գիտութիւն - Պատմական

այդքան հետամուտ եղած է Հայկի վերադարձին:

Թէեւ չի յիշատակուիր, սակայն կ'ենթադրենք, որ Հայկը եղած է Աշտարակաշինութեան գլխաւոր ճարտարապետը, եւ Հայկի բացակայութեան՝ շինարարութիւնը դադարէր: Այդ ալ պատճառ հանդիսացեր է, որ Բելը ամեն ձեւով փորձեր է գինք սիրաշահի:

Յամենայն դէպս, Հայկը կտրականապէս հրաժարուէր է, որովհետեւ Բելի ըրածը խարդախութիւն էր եւ սատանայութիւն:



Յարք, Կարավառի տարածքը երկրի վրայ

Պատկեր «25»

Եւ օր մըն ալ Կաղմոսը նկատեր է հարաւէն մեծ բազմութեան մը արշաւը դէպի հիւսիս, ու անմիջապէս տեղեկացուցեր է իր պապ Հայկին:

Հայկի եւ Բելի պատերազմը իրողութեան մէջ ոչ թէ նետ ու աղէղի մը պատմութիւնն է, այլ երկիր մուրապի ամբողջական սառցապատման ակարտիս՝ չարի կողմէ հրահրուած առաջին համաշխարհային մեծ պատերազմն է:

Հսկայ Բելը բազմաթիւ բնիկ աղամորդի մարդկանց որպէս ստրուկ վաճառէր է այլ ցամաքամասերու վրայ ապրող հսկաներու: Իսկ Հայկ նահապետի հովանիին տակ մտած Հայկական լեռնաշխարհի բնիկ մարդկանց որդիները անսասան մնացեր են իրենց հողին վրայ՝ յետոյ Հայկի անուով կոչուելու համար Հայեր: Այնպէս որ Հայ ժողովուրդը ի սկզբանէ մինչեւ այսօր տերն է իր բնօրրանին, որպէս ամենաառաջնային իսկական բնիկ ժողովուրդը:

Ինչպէս Աստուածաշունչը կ'աւանդէ, Բաբելոնի աշտարակաշինութեան ճախողման պատճառով, այնտեղ հաւաքուած հսկաներն ու մարդկանց որդիները խումբ-խումբ բաժնուէր են իրարմէ ու հեռացեր են ցամաքի տարբեր կողմեր, խումբերէն իւրաքանչիւրը մայր լեզուի հիման վրայ բարբառ մը ստեղծելով՝ առանձնացեր է միւսներէն: Սա կոչուէր է լեզուներու խառնակութիւն: Միայն Հայկն իր հետեւորդներով ու ենթականերով՝ պահպաներ են տիեզերածիկներու բուն մայր լեզուն, որ վաղիջական հայերէնն է:

Շարունակեցք պատմական անցուդարձերը:

Բելի սպանութենէն յետոյ, Հայկ նահապետն իր թոռ Կաղմոսին վստահէր է Բելի տիրոջ կառավարումը, իսկ ինքը վերադարձեր է Հարք:

Այս Կաղմոսը հերթական երկրորդ նոյնանուն անձն է, եւ սուվերական արքայացանկին մէջ կը յիշատակուի որպէս «Դուռուզի որտորդը՝ Հայայէն» (առաջինը Առիւծ Սիերն է՝ կոչուած Հովիւ Դուռուզի):

Հայկի թոռ Կաղմոսի տարածքն է որ կը համապատասխանէ երկնային Օրինո համաստեղութեան (Տես՝ Պատկեր «26»), եւ այս Կաղմոսն է որ կը ներկայանայ որպէս որտորդ Օրինո, եւ ոչ թէ Հայկ նահապետը:

Ինչպէս հայր Դեռնոյ Ավիշանը կը գրէ, մեր մատենագիրներուն մօտ երբ Օրինո համաստեղութեան մասին յիշատակուած է, Օրինոն հոմանիշ արձանագրուէր է ոչ թէ Հայկ, այլ Հայկն, որ կը բովանդակէ «Նոր Հայկ» իմաստը, քանի որ Հայկին փոխարինած է իր թոռ Կաղմոսը, որն ալ կրէր է Հայկն-Նոր Հայկ մակդիրը:

Քանզի Հայկ նահապետը չէր կրնար թէ Աղեղնաւոր, թէ Օրինո ու թէ Կարավառ համաստեղութիւնները ներկայացնել փաժամանակ:



Օրինո համաստեղութեան առաջին պատկերը երկրի վրայ

Պատկեր «26»

Ան իր զարմերէն ոմանց հետ իջեր է հարաւ արեւմուտք, եւ կայք հաստատեր է Միջերկրական ծովի արեւելեան եզերքը, ուր բնակչութիւն չէ եղած: Տարածքը կոչեր է իր գաւառի կեդրոնի անունով Փիւնիկէ, այսօրուայ Լիբանանը, եւ այնտեղ կառուցեր է մայրաքաղաք՝ զոր կոչեր է իր գաւառի անունով Ծաւղէք (որ յետագային աղաւաղուելով՝ հնչեր է Սայրա-Սիդոն): Սա պատահէր է մեզմէ մօտ 11000 տարի առաջ:


Ահա իմացք Փիւնիկէ-Լիբանան երկրի հիմնադրման պատմութիւնն ու անոր առաջինը հայութեան հետ: Կաղմոսէն մօտ 8000 տարի յետոյ, իսկ մեզմէ 3300 տարի առաջ, Արայ Գեղեցիկի սպանութենէն յետոյ՝ անոր որդին Կարդոսը Շամիրամի առաջարկով ստանձներ է անոր տիրոջներուն կառավարումը, եւ հաստատուէր է Փիւնիկէի մէջ, իր հայրենակիցներուն մօտ:

Կարդոսն է որ Փիւնիկէ տարեր է մեր այբուբենը, զոր կոչեր են փիւնիկէան այբուբեն, եւ ապա անոր սերունդները որպէս Փիւնիկէցի՝ Միջերկրականի հարաւային ափին հիմներ են Կարդագէլը, զայն կոչելով Կարդոսի անունով: Այդ պատճառով ալ Կարդագէլի վերջին տիրակալ Հանիբալը երբ ջախջախուէր է Հռոմէացիներուն կողմէ, ան ապաստանէր է Հայաստան:

Վերադառնանք պատմութեան ընթացքին:

Մեզմէ շուրջ 6000 տարի առաջ մեր պապերը կազմակերպէր են քաղաքակրթական արշաւ մը դէպի Պարսկաստան, այնտեղ տանելով կազմակերպուած նոր կենսակերպ, մշակութային եւ հաւատամքային սկզբունքներ, որոնք կոչուէր են Արիական:

Այդ արշաւին համար հաւաքուէր են Արարատեան դաշտավայրէն, եւ իրենց համար հաւաքատեղի դարձուցեր են Արցախը, զոր սկիզբը կոչեր են Արացի, որպէս Արիներու կեդրոն: Զանի որ Արիներու բնակավայրը եղած է Արարատ լեռան եւ Հայկական Պար լեռնաշղթայի տարածքը:



Անգղ Տուս

ԱՐԵՎՍՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐՈՒ ԵՒ ԱՐԵՎՍՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՐԱԲՈՒՆՔՆԵՐՈՒ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ԻՐԱԲԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՓԱԹԵԹ - Ժողովածու

Գլուխ II

ԱՐԵՎՍՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐՈՒ ՊԵՏԱԿԱՆԱՍՏԵՂԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՐԵՎՍՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ (ՀԱՅԱՍՏԱՆ ՊԵՏՈՒԹԻՒՆ) ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՅՆՆԵՐՈՒ ԶԵԲԱԲՐՈՒՄԸ (հիմնարար փաստաթուղթեր)

ԱՐԵՎՍՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐՈՒ ՊԵՏԱԿԱՆԱՍՏԵՂԾ 10-ամեայ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆԸ

Արեւմտեան Հայաստանի հայերու իրաւունքներու պաշտպանութեան աւելի քան 10ամեայ գործունեութեան իբրեւ արդիւնք ձեւակերպուած, մշակուած ու ձեւաւորուած են հետեւեալ ծրագիրները, հիմքերը:

1. Գործունեութեան իրաւական - քաղաքական միասնական փաթեթի հիմնական դրոյթներն ու ուղղութիւններն են.

- ա) Իրաւական-քաղաքական ուղղութիւն, որ կը ներառէ -Ռուսաստանի Կառավարութեան Դեկրետը Արեւմտեան Հայաստանի մասին՝ 29 Դեկտեմբեր 1917 թ.,
- Սելիի խաղաղութեան պայմանագիրը՝ 10 Օգոստոս 1920 թ.,
- ԱՄՆ 28-րդ նախագահ Վուոթո Ուիլսոնի Իրաւարար վճիռը՝ 22 Նոյեմբեր 1920 թ.,
- Կիլիկիոյ Անկախութեան Հռչակագիրը՝ 4 Օգոստոս 1920 թ.,
- յարակից այլ պայմանագրեր եւ իրաւական փաստաթուղթեր:

- բ) Իրաւական-քաղաքական ուղղութիւն եւ գործունեութիւն, որ կը ներառէ
- Բնիկ ժողովուրդներու իրաւունքներու մասին հռչակագիրը,
- Արեւմտեան Հայաստանի հայերու ազգային ինքնութեան եւ քաղաքացիութեան կառոյցի ստեղծումն ու կայացումը,
- յարակից այլ իրաւական փաստաթուղթեր եւ աշխատանքներ:

- գ) Իրաւական ուղղութիւն, որ կը ներառէ Հայերու ցեղասպանութեան դատապարտման եւ հատուցման ուղղութեամբ իրականացուող աշխատանքները միջազգային դատական ատեաններու մէջ, ներառեալ՝ Հաագայի դատարանին մէջ:

- դ) Իրաւական ուղղութիւն, որ կը ներառում Հայոց պատմամշակութային եւ քաղաքակրթական արժեքներու պաշտպանութեան ուղղութիւնը Եւրոպական Մարդու իրաւունքներու դատարանին մէջ եւ համապատասխան այլ ատեաններու մէջ:

2. Գործունեութեան իրաւական - քաղաքական հիմքերն են.

- ա) «Արեւմտեան Հայաստանի հայերի ինքնորոշման իրավունքի մասին» հռչակագիրը (ընդունուած՝ 2004 թուականի Դեկտեմբեր 17-ին),
- բ) «Արեւմտեան Հայաստանի հայերու իրաւունքներու մասին» հռչակագիրը (ընդունուած՝ 2007 թուականի Յունուար 20-ին),
- գ) Արեւմտեան Հայաստանի Կառավարութեան ստեղծման վերաբերեալ հռչակագիրը (ընդունուած՝ 2011 թուականի Փետրուար 4-ին),
- դ) Արեւմտեան Հայաստանի պետական համակարգի մասին որոշումը (ընդունուած՝ 2011 թուականի Մարտ 2-ին),
- ե) Արեւմտեան Հայաստանի Ազգային Խորհուրդի կայացուցած «Արեւմտեան Հայաստանի եւ Արեւմտեան Հայաստանի հայերու Մշտական, զինուած, դրական չեզոքութեան մասին» որոշումը, (ընդունուած՝ 2011 թուականի Մարտ 29-ին),

- զ) «Արեւմտեան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) ձեւաւորման մասին» հռչակագիրը (ընդունուած՝ 2013 թուականի Մայիս 24-ին),
- է) «Արեւմտեան Հայաստանի պետական կառուցուածքի, Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի պատգամաւորներու կարգավիճակի եւ Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի կանոնակարգի մասին» օրէնքը (ընդունուած՝ 2014 թուականի Մարտ 7-ին),
- ը) Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան նախագահի հրամանագիրը Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութեան նախագիծի մշակման եւնձնաժողով ստեղծելու մասին (հրապարակուած՝ 2014 թուականի Օգոստոս 10-ին):

3. Գործունեութեան լծակներն են.

- ա) Արեւմտեան Հայաստանի Ազգային Խորհուրդը, որուն գործունեութեան իբրեւ արդիւնք կը ձեւաւորուի Արեւմտեան Հայաստանի հայերու ազգային ինքնութեան եւ քաղաքացիութեան կառոյցը, որ կու տայ Արեւմտեան Հայաստանի հայերու իրաւունքները միջազգային ամենատարբեր ձեւաչափերու մէջ պաշտպանելու եւ իրականացնելու հնարաւորութիւն: Ասիկա ի հակադրութիւն «սփիւռքահայ» որակման, որ ունի թերի ազգային ինքնութիւն եւ չ'նշխաղդեր ազգային - պետական նշանակութեան յստակ իրաւունքներ եւ զանոնք պաշտպանելու եւ իրագործելու հնարաւորութիւն:

- բ) Այսպիսով, Արեւմտեան Հայաստանի Ազգային Խորհուրդը եւ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան պետականութեան երեք կառոյցները՝ Արեւմտեան Հայաստանի Կառավարութիւնը, Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովը (Խորհրդարանը), Արեւմտեան Հայաստանի Նախագահական հիմնարկը եւ Նախագահական Խորհուրդը միասին կ'իրականացնեն աշխատանքներ պաշտպանելու Արեւմտեան Հայաստանի հայերու իրաւունքները Արեւմտեան Հայաստանի նկատմամբ եւ ձեւաւորելու ու հաստատելու Արեւմտեան Հայաստան պետութիւնը՝ Բնօրրան Հայրենիքի մէջ:

Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան կայացումը, Հայոց պետականաշինութեան գործին մէջ, շարունակական եւ կարեւոր քայլ է՝ ազատ, անկախ, ինքնիշխան եւ միացեալ Հայաստանի հաստատման գործին մէջ:
Յաղթանակը մերը պիտի ըլլայ:

Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան վարչապետ
20.08.2014 թ.

ԱՐԵՎՍՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐՈՒ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՀԻՄՆԱԴԻՐ ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ

2004 թուականի Դեկտեմբեր 17-ին, Արցախի Շուշի քաղաքին մէջ, տեղի ունեցաւ Արեւմտեան Հայաստանի Ազգային Խորհուրդի հիմնադիր ժողովը, ուր ներկայ էին հիմնադիր ժողովի անդամներ՝ Արմենակ Աբրահամեանը, Յովսէփ Յովսէփեանը, Աշոտ Բաբայեանը, Վաչագան Իշխանեանը, Հրաչեայ Փիլիպոսեանը, Վիտալի Բալասանեանը, Կոմիտաս Դանիելեանը, Մելանեայ Բալայեանը, Սամուէլ Կարապետեանը, Գագիկ Սարգսեանը:

Հիմնադիր ժողովը քննութեան առաւ հետեւեալ հարցերը՝

Պետական

1. Արեւմտեան Հայաստանի Հայերու Ազգային Խորհուրդի կազմաւորման հարցը, 2. Արեւմտեան Հայաստանի Հայերու Ազգային Խորհուրդի կողմէ՝ «Արեւմտեան Հայաստանի Հայերու իրաւունքներու մասին» Հռչակագրի պատրաստումը, 3. Արեւմտեան Հայաստանի Հայերու Ազգային Խորհուրդի աշխատանքներու համակարգողի թեկնածութեան յառաջադրման եւ ընտրութեան հարցը:

Միաձայն քուէարկութեամբ՝ հաստատուեցաւ Արեւմտեան Հայաստանի Հայերու Ազգային Խորհուրդի հիմնադրումը, հաստատուեցաւ Արեւմտեան Հայաստանի հայերու Ազգային Խորհուրդին կողմէ՝ «Արեւմտեան Հայաստանի Հայերու իրաւունքներու մասին» Հռչակագրի պատրաստման եւնձնարարականը, Արմենակ Աբրահամեան ընտրուեցաւ Արեւմտեան Հայաստանի Հայերու Ազգային Խորհուրդի աշխատանքներու համակարգող եւ կազմակերպիչ:

Այդպիսով՝ Արեւմտեան Հայաստանի Հայերու Ազգային Խորհուրդի աշխատանքները աւարտեցան:

Արեւմտեան Հայաստանի Հայերու Ազգային Խորհուրդ Շուշի, 17 Դեկտեմբեր 2004 թ.

ԱՐԵՎՄԱՏԵԼ ԳԱԿԱՏՎԱԾ ԳՆԱՀԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆԵՑԻ ՀՈՉԱԿԱԳԻՐԸ

Արեւմտեան Հայաստանի հայոց Ազգային Խորհուրդը տարագիր հայ ժողովուրդի միասնական կամքը արտայայտելով, բոլոր հայերու ձգտումներուն իրականացման եւ պատմական արդարութեան վերականգնման եւնձնառու հայ ազգի ճակատագրին հանդէպ իր պատասխանատուութեան գիտակից, մարդու իրաւունքներու հռչակագրի համընդհանուր սկզբունքներուն եւ առհասարակ միջազգային իրաւունքով ընդունուած չափանիշներուն հիմնուելով ժողովուրդներու ինքնորոշման իրաւունքը կիրառելով՝

ԿԸ ՅԱՅՏԱՐԱՐԵ Արդարութեան վրայ հիմնուած ժողովրդավար ընկերութեան հաստատումը հետապնդող ազգի վերակենդանացման գործընթացի մեկնարկը. 1) «Թըքահայաստան» կոչուած Հայաստանը կը վերանուանուի Արեւմտեան Հայաստան (Հայրենիք): Արեւմտեան Հայաստանը (Հայրենիք) պիտի ունենայ իր դրօշը, զինանշանը եւ ազգային օրհներգը:

2) Արեւմտեան Հայաստանը (Հայրենիք) պիտի ըլլայ ինքնավար պետութիւն՝ ազգային գերագոյն իշխանութիւն, անկախութիւն, լիարժէք գերիշխանութիւն եւ իրաւունքներ վայելող: Ազգային բացառապէս Արեւմտեան Հայաստանի (Հայրենիք) Սահմանադրութիւնն ու Արդարադատութիւնը:

3) Արեւմտեան Հայաստանի (Հայրենիք) երաշխաւորը իր ժողովուրդն է՝ այսօր տարագիր, որ իր իշխանութիւնը պիտի կ'իրաւէ ուղղակիօրէն, ինչպէս նաեւ իր ներկայացուցիչներուն միջոցով՝ հիմնուելով Սահմանադրութեան եւ օրէնքներուն վրայ: Եանուն Արեւմտեան Հայաստանի (Հայրենիք) արտայայտուելու իրաւունքը Ազգային Խորհուրդի բացառիկ իրաւունքն է:

4) Արեւմտեան Հայաստանի (Հայրենիք) անդամ կը հանդիսանան բոլոր այն անդամները, որոնք կրնան հիմնաւորել իրենց տարագրեալ ըլլալը եւ իրենց ընտանեկան ծագումը՝ Նոյնիսկ քանի մը սերունդ վաղեմութիւն ունեցող: Արեւմտեան Հայաստանի (Հայրենիք) անդամները կը վայելեն Ազգային Խորհուրդի պաշտպանութիւնն ու օգնութիւնը: Ազգային Խորհուրդը իր բոլոր անդամներուն ազատութիւնը եւ անոնց միջեւ հաւասարութիւնը կ'երաշխաւորէ:

5) Մարդոց եւ իրերու անվտանգութիւնը եւ սահմաններու անձեռնմխելիութիւնը ապահովելու նպատակով Արեւմտեան Հայաստանը (Հայրենիք) կը ստեղծէ իր ուրոյն պաշտպանական

կառոյցը, հանրային ապահովութեան եւ պետական կառոյցները՝ Ազգային Խորհուրդին ընդհատեալ: Արեւմտեան Հայաստանը (Հայրենիք) իր անդամներուն իւրաքանչիւրի ազգային ծառայութեան խնդիրի կարգաւորումը կը տնօրինէ անկախաբար: Արեւմտեան Հայաստանի (Հայրենիք) պաշտպանական ուժերը կրնան տեղակայուիլ/տեղաբաշխուիլ բացառապէս Ազգային Խորհուրդի որոշումով՝ Ազգային Խորհուրդի Նախագահի բարձր իրամասնատարութեան ներքոյ:

6) Միջազգային իրաւունքի գետնի առումով Արեւմտեան Հայաստանը արտաքին անկախ քաղաքականութիւն կը վարէ: Ան ուղղակի յարաբերութիւններ կը հաստատէ միւս պետութիւններուն հետ եւ կը մասնակցի միջազգային կազմակերպութիւններու գործունեութիւններուն:

7) Արեւմտեան Հայաստանի ազգային հարստութիւնը՝ իր ժողովուրդը, հողը, ընդերքը, օդային տարածքը, ջուրերը եւ այլ բնական պաշարները, տնտեսական եւ մտաւոր ներուժն ու մշակութային կարողութիւնը Ազգին կը հանդիսանան: Անոնց վարումը, օգտագործումը, վայելումը եւ տիրանալը կը վերահսկուի Արեւմտեան Հայաստանի օրէնքներով:

8) Արեւմտեան Հայաստանը (Հայրենիք) կ'որոշէ իր տնտեսական համակարգի սկզբունքները եւ կը տնօրինէ համակարգի կարգաւորումը. անհրաժեշտութեան պարագային կրնայ ստեղծել իր սեփական տարադրամը, ազգային դրամատունը, ելեւմտական փոխառութեան, հարկերու եւ այլազան ծառայութիւններու իր համակարգը՝ հիմնուած սեփականութեան տարբեր ձեւերու դրութեան վրայ:

9) Իր իսկ մէջ Ազգային Խորհուրդը կ'երաշխաւորէ խօսքի, մամուլի եւ խղճի ազատութիւնը, օրէնսդիր, գործադիր եւ դատական իշխանութիւններու իրարմէ անջատ գոյութիւնը, արհեստակցական եւ մասնագիտական միութեանական համակարգը, բազմակարծութիւնը եւ պետական պաշտօնեաներու ու պաշտպանական ուժերու ապաքաղաքական բնոյթը:

10) Ազգային Խորհուրդը կ'երաշխաւորէ կեանքի բոլոր ոլորտներուն մէջ արեւմտահայերէնի կիրառումը՝ որպէս պետական լեզու: Ազգային Խորհուրդը կը ստեղծէ իր ուրոյն կրթական համակարգը եւ գիտական ու մշակութային զարգացման դրութիւնը:

11) Ազգային Խորհուրդը 1894-էն 1923 գրաւման ենթարկուած իր տարածքին վրայ (Արեւմտեան Հայաստան, Հայրենիք) թուրքերուն կողմէ կատարուած Ցեղասպանութեան միջազգային ճանաչումին հասնելու պարտականութեան զօրավիզ է:

12) Ազգային Խորհուրդը զօրավիզ է տարագրեալներու սերունդներու վերահաստատումին զուգահեռ պէտք է վճարուի վնասուց յատուցում՝ ստեղծելով Միջազգային Հիմնադրամ՝ մեծ մասամբ Հայոց Ցեղասպանութեան մէջ պատասխանատու ճանչցուած պետութիւններու արդեամբ:

13) Այս հռչակագիրը հիմք կը ծառայէ Արեւմտեան Հայաստանի (Հայրենիք) Սահմանադրութեան մշակման, եւ, միևնույն անոր ընդունումը, հիմք կը ծառայէ օրէնքներ ներմուծելու եւ գործող սահմանադրութեան յաւելումներ ընելու համար, ազգային իշխանութիւններու գործունեութեան համար եւ Նոր օրէնսդրութեան մշակման համար:

Արեւմտեան Հայաստանի Հայոց Ազգային Խորհուրդ Շուշի, 17 Դեկտեմբեր 2004թ.

ԱՐԵՎՄԱՏԵԼ ԳԱԿԱՏՎԱԾ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՊԱՏՎԱԾՆԵՐՈՒ ԴԱՇՏՈՆԱԿԱՆ Հ Ո Չ Ա Կ Ա Գ Ի Ր Ը

ԱՐԵՎՄԱՏԵԼ ԳԱԿԱՏՎԱԾ ՀԱՅԵՐՈՒ ԻՐԱՎՈՒՆԵՆԵՐՈՒ ՎԵՐԱԲԵՐԵԱԸ

Նկատի ունենալով հետեւեալ դրոյթները. Հազարամեակներէ ի վեր հայերու մեծամասնութիւնը ապրած է

Պետական

Արեւմտեան Հայաստան, իբրեւ այդ շրջանի բնիկ ժողովուրդ, ուր հիմնած է կայուն եւ բարգաւաճ պետութիւն եւ ստեղծած մշակութային առաջնակարգ արժէքներ. - Օսմանեան լուծին տակ հայերը մշտապէս ենթարկուած են հալածանքներու, կոտորածներու եւ բռնի տեղահանութիւններու, որոնց գագաթնակէտը, 1894-1896 թթ., 1909 թթ., ջարդերն ենք, 1915-1923 թթ. ցեղասպանութիւնը եղաւ՝ պատճառ հանդիսանալով 2 միլիոն զոհերու:

Հետեւաբար, Արեւմտեան Հայաստանի հայերու մնացորդը ցեղասպանութենէն փրկուելով՝ արմատախիլ եղած են իրենց պայպենական հայրենիքէն եւ սփռուած են աշխարհի գանազան կողմերը. - Առաջին աշխարհամարտի ընթացքին, 1918 թ. փետրուար 2-ին ռուսական ոյժերը ազատագրած են Արեւմտեան Հայաստանը, եւ Հայ Ազգային Խորհուրդը դիմած է Ֆրանսայի՝ ճանչնալու Արեւմտեան Հայաստանի անկախութիւնը («Թուրքահայաստան» կամ «Տաճկահայաստան» կոչուած), իսկ 1918 թ. յունուար 13-ին Ռուսիա պաշտօնական հրամանագրով ընդունած է Արեւմտեան Հայաստանի («Թուրքահայաստան» կամ «Տաճկահայաստան» կոչուած) անկախութիւնը, որով Արեւմտեան Հայաստանի հայերու իրաւունքները դրուեցան իրենց իսկ տնօրինութեան ներքոյ. - Սայքս-Փիքոյի համաձայնագիրը Կիլիկիոյ մէջ, ստորագրուած 1916 թ. մայիս 9-ին եւ 16-ին, յանձնարարագիր մը շնորհեց Ֆրանսայի՝ Տիգրանակերտի (Տիարպէքի), Խարբերդի եւ Առանայի գաւառներու հայերու ինքնավարութիւնը թելարկելու, միեւնոյն ժամանակ համաձայնութեան գալով Հայ Ազգային Պատուիրակութեան ներկայացուցիչներուն հետ, որով Կ'որոշուի Արեւելեան Լեզեռնի մը (հետագային՝ Հայկական զօրագունը) ստեղծումը. - Ռուսական կայսրութեան կործանումէն ետք հայկական գերիշխանութիւնը վերահաստատուած է Հայաստանի Անկախ Հանրապետութեան մը կարգումով Արեւելեան Հայաստանի մէկ մասին վրայ:

Բայց երկու կարճատեւ տարիներէ ետք Խորհրդային Ռուսիոյ եւ քեմալական թուրքերու բանակները յարձակում կը գործեն երիտասարդ Հայաստանի Հանրապետութեան վրայ: Նախիջեանի, Կարսի, Ջաւախքի եւ Արցախի (Ղարաբաղ) հողերը յօշէլէ ետք հայկական ազտիկ պետութիւն մը կը ստեղծուի, որ մաս կը կազմէ Խորհրդային Միութեան՝ մինչեւ 1991 թուականը. - Սոյն կացութիւնը դարմանելու եւ իրենց խնդիրներու լուծման համար Արեւմտեան Հայաստանի ներկայացուցիչները երկու վեհաժողով կազմակերպած են Երեւանի մէջ 1917 եւ 1919 թուականներուն:

Երկրորդ վեհաժողովին հաստատուած գործադիր մարմինը 12 երեսփոխաններ ընտրեց, որոնք հանդիսացան իբրեւ ներկայացուցիչներ Հայաստանի Հանրապետութեան Ազգային Ժողովին մէջ. - 1920 թ. օգոստոս 10-ի Սեւրի խաղաղութեան դաշնագիրը, ստորագրուած մէկ կողմէն Դաշնակից տերութիւններու եւ միւս կողմէն Թուրքիոյ միջեւ, պահանջած է «բանակցող կողմերէն»՝ ընդունելի Ամերիկայի Միացեալ Նահանգներու նախագահի իրաւարարութեան ենթարկել Կարին (Էրզրում), Տրապիզոն, Վան եւ Բիթլիս գաւառներու մէջ Թուրքիոյ եւ Հայաստանի միջեւ սահմանագծին որոշման հարցը, ապա վաւերացնել գայն, ինչպէս եւ՝ մնացած կետերը, զորս ճանապարհ կը հարթէին Հայաստանի՝ ծով ելքի եւ վերոյիջեալ սահմանները հատող թուրքական հողամասերու ապառազմականացման»:

Այդ ժամանակներէն ի վեր Արեւմտեան Հայաստանի հայերը հետապնդած են արդարութեան իրենց հանգանակը աշխարհի մէջ հետեւեալ իրողութիւններու հիման վրայ. - Ազգային Վեհաժողովի եւ Ազգային Պատուիրակութեան գործունեութիւններու դադարումէն յետոյ, որ տեղի ունեցաւ 1919 թ. փետրուարէն մինչեւ 1920 թ. յուլիս ամիսը Փարիզի մէջ, Արեւմտեան Հայաստանի հայերը երբէք յաջողեցան կարգելու ըստ պատշաճին ընտրուած Ներկայացուցչութիւն մը, որ պաշտպաներ իրենց օրինական իրաւունքները. - Աշխատանքներու տարրորշ յատկացումները եւ դերերու դասաւորումները հայ ժողովուրդի արեւմտեան եւ արեւելեան հատուածներու միջեւ, ինչպէս եւ անոնց ջանքերու համադասումը, կրնային նպաստել իրենց խնդիրներու լաւագոյն լուծմանը յանգելուն:

Այսպիսով կոչ կ'ընենք. Արեւմտեան Հայաստանի հայերուն՝

գործել իրենց սեփական Հայ Ազգային Խորհուրդի հովանաւորութեան ներքոյ, քանի որ միայն իրենք են, որ կրնան իրաւամբ առաջ տանիլ այդ գործունեութիւնը, զոր կը նպաստէ Արեւմտեան Հայաստանի Ազգային Համագումար մը կազմելուն, որու պատուիրակները ընտրուած կ'ըլլան գանազան գաղթօճախներու համայնքներէ: Արեւմտեան Հայաստանի հայերը իրենք են, որ սրբօրէն պետք է արժէքաւորեն ինքնորոշման իրենց իրաւունքը եւ կազմեն իրաւական պետութիւն մը:

Հաստատելով, որ Արեւմտեան Հայաստանի հայերը իրենց արժանիքներով եւ իրաւունքներով հաւասար են բոլոր միւս ժողովուրդներուն՝ ընդունելով բոլոր ժողովուրդներու տարբերութիւնները, ինքզինքնին այլ ձեւով գնահատելու եւ որպէս այդպիսին յարգուելու իրաւունքը, Հաստատելով նաեւ, որ բոլոր ժողովուրդները կը նպաստեն քաղաքակրթութիւններու եւ մշակոյթներու այլազանութեանը եւ հարստութեանը, որ համայն մարդկութեան հարստութիւնը կը կազմեն, Հաստատելով, որ բոլոր այն վարդապետութիւնները, ըլլան անոնք քաղաքական, թե՛ գործնական, որոնք կոչ կ'ընեն կամ կը քարոզեն որեւէ ժողովուրդի կամ անհատի գերակաւցուցելու, հիմնուած՝ ազգային, ցեղային, կրօնական, ազգագրական, ցեղաբանական տարբերութիւններու վրայ, գիտական տեսանկիւնէն կեղծ են, ցեղապաշտական են եւ իրաւական գետնի վրայ՝ անարժէք, բարոյապէս դատապարտելի, իսկ ընկերային առումով՝ անարդար, Վերահաստատելով, որ Արեւմտեան Հայաստանի հայերը իրենց իրաւունքները կիրարկելու ընթացքին խտրականութեան ոչ մէկ դրսեւորման ենթակայ ըլլալու են, Մտահոգ ըլլալով առ այն, որ Արեւմտեան Հայաստանի հայերը զրկուեցան մարդու իրաւունքներէն եւ իրենց հիմնական ազատութենէն եւ այլ հետեւանքներու կարգին, ենթարկուած են ջարդերու, բռնագաղթի եւ սեփանականազրկման իրենց երկրէն, հողերէն եւ բնական պաշարներէն, որը արգելք հանդիսացած է, մանաւանդ, բարգաւաճման իրենց իրաւունքը կիրարկելու, իրենց իսկ կարիքներուն եւ շահերուն համապատասխան,

Ընդունելով Արեւմտեան Հայաստանի հայերու իրաւունքներն ու առանձնայատկութիւնները յարգելու եւ յառաջացնելու անհրաժեշտութիւնը, մասնաւորապէս անոնց երկրի, հողերու եւ բնական պաշարներու նկատմամբ իրաւունքները, զոր կը բխին անոնց քաղաքական, տնտեսական եւ ընկերային կառոյցներէն եւ անոնց մշակոյթէն, անոնց հոգեւոր ավանդոյթներէն, անոնց պատմութենէն, ինչպէս նաեւ անոնց փիլիսոփայութենէն,

Միմեանց շնորհաւորելով այն իրողութեան համար, որ Արեւմտեան Հայաստանի հայերը կը կազմակերպուին բարեխալելու իրենց կացութիւնը քաղաքական, տնտեսական, ընկերային եւ մշակութային ասպարեզներու մէջ՝ վերջ դնելու խտրականութեան բոլոր այն դրսեւորումներուն եւ ճնշումներուն, զորս կը պատճառուին անոնց ամենուրեք, Համոզուած ըլլալով, որ իրենց եւ իրենց երկրին, հողերուն եւ բնական պաշարներուն վերաբերող ձեռնարկներու վրայ հսկողութիւնը Արեւմտեան Հայաստանի հայերու կողմէ թոյլ կու տայ անոնց զօրացնելու իրենց կառոյցները, մշակոյթը, իրենց ավանդոյթները եւ զարգացնելու իրենց բարգաւաճումը իրենց փափաքներուն, տենչանքներուն եւ պահանջներուն համապատասխան,

Ընդունելով նաեւ, որ գիտելիքներու, մշակոյթներու եւ ավանդական արարողութիւններու հանդէպ յարգանքը կ'ամրապնդէ շրջապատը տեսականօրէն եւ արդարացի կերպով արժէքաւորելուն եւ անոր ճիշտ կառավարման, Ընդգծելով Արեւմտեան Հայաստանի հայերու երկրի եւ հողերու պառազմականացման անհրաժեշտութիւնը եւ այսպիսով խաղաղութեան, տնտեսական եւ ընկերային բարգաւաճման, ինչպէս նաեւ աշխարհի ժողովուրդներու եւ ազգերու միջեւ յամերաշխ ու բարեկամական յարաբերութեանց օժանդակման անհրաժեշտութիւնը, Ընդունելով մասնաւորապէս ընտանիքներու եւ համայնքներու՝ իրենց գաւակներու իրօնութեան, ուսման, դաստիարակութեան եւ բարօրութեան իրենց վերաբերող պատասխանատուութիւնը պահպանելու իրաւունքը, Ընդունելով նաեւ, որ Արեւմտեան Հայաստանի հայերը իրաւունք ունին ազատօրէն սահմանելու իրենց յարաբերութիւնները Պետութիւններու հետ՝ համակեցութեան, փոխադարձ շահերու եւ մեծ յարգանքի ոգով:

Պետական

Նկատելով, որ Արեւմտեան Հայաստանի եւ Պետութիւններու միջեւ դաշնագրերը, համաձայնագրերը եւ այլ կարգադրութիւնները միջազգային մտահոգութեան եւ պատասխանատուութեան օրինական առարկայ են, Ընդունելով, որ Միացեալ Ազգերու Սահմանադրութիւնը, տնտեսական, ընկերային եւ մշակութային իրաւունքներու վերաբերեալ միջազգային Դաշինքը, նաեւ քաղաքացիական եւ քաղաքական իրաւունքներու վերաբերեալ միջազգային Դաշինքը կը հաստատեն իրենք զիրենք տնօրինելու՝ բոլոր ժողովուրդներու իրաւունքի արմատական կարեւորութիւնը, որու հիմամբ անոնք ազատօրէն կը սահմանեն իրենց քաղաքական կարգավիճակը՝ ազատօրէն ապահովելով իրենց տնտեսական, ընկերային եւ մշակութային զարգացումը, Նկատելով, որ ներկայ Հայաստանի ոչ մէկ դրոյթ կարելի չէ վկայութեան բերել՝ ուրանալու համար ո՛րեւէ ժողովուրդի ինքնորոշման իրաւունքը, Յորդորելով Պետութիւնները՝ յարգելու եւ ի գործ դնելու միջազգային բոլոր, մասնաւորաբար, մարդու իրաւունքներու վերաբերեալ գործարքները, զորս կիրարկելի են Արեւմտեան Հայաստանի հայերուն համար, գործակցելով պատկան ժողովուրդներու հետ, Ընդգծելով, որ Միացեալ Ազգերու Կազմակերպութիւնը կարեւոր դեր ունի եւ կը շարունակէ ունենալ Արեւմտեան Հայաստանի հայերու իրաւունքներու յառաջխաղացման եւ պաշտպանութեան մէջ, Համաձուլած ըլլալով, որ սոյն Հռչակագիրը կարեւոր նոր հանգրուան մըն է Արեւմտեան Հայաստանի հայերու իրաւունքները եւ ազատութիւնները ճանչնալու, այդ իրաւունքներու յառաջացման եւ պաշտպանութեան, ինչպէս եւ այս բնագաւառին մէջ Միացեալ Ազգերու կառույցներու պատշաճ գործունեութեան զարգացման ճանապարհին, Հանդիսաւորապէս կը յայտարարէ՝ Բնիկ ժողովուրդներու վերաբերեալ Միացեալ Ազգերու Հռչակագիրը կիրարկելի՝ Արեւմտեան Հայաստանի հայերու համար, որուն բովանդակութիւնը հետեւեալն է. Բաղկացած 45 յօդուածներէ՝ 9 բնագաւառներու վերաբերող, որոնք են.

Առաջին մաս. Արեւմտեան Հայաստանի հայերու ազատ ըլլալու իրաւունքը Երկրորդ մաս. Ազատ ապրելու իրաւունք՝ մարմնական եւ մտային ամբողջութեամբ եւ 5 ապահովութեամբ Երրորդ մաս. Լեզուի, մշակոյթի եւ ակադեմիայներու իրաւունք Չորրորդ մաս. Կրթութեան եւ դաստիարակութեան իրաւունք Հինգերորդ մաս. Չարգացման եւ ընկերային պաշտպանութեան իրաւունք Վեցերորդ մաս. Քաղաքացիական ապահովութեան, հողային եւ առողջապահական կանոնադրութեան իրաւունք Եօթներորդ մաս. Քաղաքացիական եւ քաղաքական իրաւունք Ութերորդ մաս. Միջազգային գործակցութեան եւ արտաքին յարաբերութիւններու իրաւունք Իններորդ մաս. Անձի արժանապատուութեան իրաւունք

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ (Արեւմտեան Հայաստանի հայերու ազատ ըլլալու իրաւունքը)

Յօդուած 1 Արեւմտեան Հայաստանի հայերը իրաւունք ունին լիովին եւ իրապէս վայելելու մարդու, ինչպէս եւ հիմնական ազատութեանց իրաւունքները, որոնք ընդունուած են Միացեալ Ազգերու Սահմանադրութեան, նաեւ մարդու իրաւունքներու եւ անոնց վերաբերեալ միջազգային իրաւունքի համամարդկային Հռչակագրի կողմէն:

Յօդուած 2 Արեւմտեան Հայաստանի հայերը՝ իբրեւ անհատ կամ ժողովուրդ, ազատ են իրենց արժանապատուութեամբ եւ իրաւունքներով հաւասար, ինչպէս մնացած բոլոր մարդիկ եւ ժողովուրդները եւ պէտք չէ ենթակայ ըլլան աննպատակ տարականութեան որեւէ մէկ ձեւին, մասնաւորաբար իրենց ծագման կամ ինքնութեան առնչութեամբ:

Յօդուած 3 Արեւմտեան Հայաստանի հայերը իրենք զիրենք տնօրինելու իրաւունքը ունին: Այս իրաւունքի շնորհիւ անոնք ազատօրէն կ'որոշեն իրենց քաղաքական կացութիւնը եւ ազատօրէն կ'ապահովեն իրենց տնտեսական, ընկերային եւ մշակութային զարգացումը:

Յօդուած 4 Արեւմտեան Հայաստանի հայերը իրաւունք ունին հաստատուն պահելու, պահպանելու եւ զօրացնելու իրենց քաղաքական, տնտեսական, ընկերային եւ մշակութային առանձնայատկութիւնները, ինչպէս եւ իրենց իրաւական համակարգը, պահպանելով պետութեան քաղաքական, տնտեսական, ընկերային եւ մշակութային կեանքին լիովին մասնակցելու իրաւունքը, եթէ այդ է իրենց ընտրութիւնը:

Յօդուած 5 Արեւմտեան Հայաստանի բոլոր հայերը, իբրեւ անհատ, իրաւունք ունին ազգային պատկանելիութեան: **ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ (Ազատ ապրելու իրաւունք՝ մարմնական եւ մտային ամբողջութեամբ եւ պահովութեամբ)**

Յօդուած 6 Արեւմտեան Հայաստանի հայերը, իբրեւ հաւաքականութիւն, իրաւունք ունին իբրեւ ուրոյն ժողովուրդ ապրելու ազատ, խաղաղ եւ ապահով՝ իրենց պատմութեան եւ ցեղասպանութեան ճանաչումով, որուն ենթակայ եղած են 1894-1923 թթ., եւ իրաւունք ունին լիովին պաշտպանուած ըլլալու որեւէ մէկ այլ ցեղասպանութեան կամ բռնութեան դրսեւորումներէ՝ ներառեալ մանուկներու առեւանգումը՝ անկախ այս կամ այն պատրուակներէ: Անոնք, իբրեւ անհատ, կեանքի, մտային եւ մարմնական ամբողջութեան եւ ազատութեան ու անձնական ապահովութեան իրաւունքը ունին:

Յօդուած 7 Արեւմտեան Հայաստանի հայերը, իբրեւ անհատ եւ հաւաքականութիւն, իրաւունք ունին պաշտպանուած ըլլալու ազգասպանութենէ, անոնց պատմութեան ժխտումէն եւ մշակութային ցեղասպանութենէ, մասնաւորապէս այնպիսի միջոցներով, որոնք վերակազմաւորման արգելքներ կը յարուցեն.

- ա) որեւէ արարք, որ նպատակ կամ ազդեցութիւն ունի անոնց զրկելու իրենց ամբողջութենէն իբրեւ ուրոյն ժողովուրդ կամ իրենց մշակութային արժէքներէ եւ կամ ազգային ինքնութենէ,
- բ) որեւէ արարք, որ նպատակ կամ արդիւնք ունի սեփականազրկելու անոնց իրենց երկրէն, իրենց հողերէն կամ իրենց բնական պաշարներէն,
- գ) բնակչութեան տեղափոխութեան որեւէ կերպ, որ նպատակ կամ արդիւնք ունի ոտնակոխելու, բռնադատելու, դժբերութիւն կամ վերացնելու անոնց իրաւունքներէն որեւէ մէկը,
- դ) ծովման կամ այլ մշակոյթներու տարբեր կենսակերպերու համարկման որեւէ ձեւ, զոր պարտադրուած է օրինական, վարչական կամ այլ միջոցներով,

Ե) անոնց դէմ ուղղուած քարոզչութեան որեւէ ձեւ: Յօդուած 8 Արեւմտեան Հայաստանի հայերը, իբրեւ անհատ եւ հաւաքականութիւն, իրաւունք ունին պահպանելու եւ զարգացնելու իրենց առանձնայատկութիւնները եւ ուրոյն ինքնութիւնը, ներառեալ իրենց բնիկ ըլլալու հանգամանքը եւ պահանջելու եւ իբրեւ այդպիսի ճանչցուած ըլլալու իրաւունքը:

Յօդուած 9 Արեւմտեան Հայաստանի հայերը, իբրեւ անհատ եւ ժողովուրդ, իրաւունք ունին պատկանելու համայնքի կամ ազգի մը՝ անոնց լեզուին, ակադեմիաներուն, սովորոյթներուն եւ բարքերուն համաձայն: Ոչ մէկ աննպատակ երեւոյթ կրնայ արգելք հանդիսանալ այս իրաւունքի կիրարկման:

Յօդուած 10 Արեւմտեան Հայաստանի հայերը չեն կրնար պարտադրաբար մեկնիլ իրենց երկրէն եւ հողերէն: Հոն անկարելի է վերաբնակեցում հաստատել, առանց պատկան ժողովուրդներու հաւանութեան՝ արտայայտուած ազատօրէն եւ պատճառի լիիրաւ գիտակցութեամբ, նաեւ արդար ու ճիշդ վնասահատուցման վրայ հիմնուած համաձայնութենէ ետք, ու, եթէ հնարաւոր է, ետդարձի կարելիութեամբ:

Յօդուած 11 Արեւմտեան Հայաստանի հայերը մասնայատուկ պաշտպանութեան եւ ապահովութեան իրաւունք ունին զինեալ բախումներու ժամանակ: Ստիպողական իրաւիճակներու եւ զինեալ բախումներու ժամանակ Պետութիւնները պարտաւոր են յարգել քաղաքացիական բնակչութեան պաշտպանութեան վերաբերեալ միջազգային կանոնները, մասնաւորապէս, 1949 թ. ժընեւի չորրորդ պայմանադրութիւնը ու պարտաւոր են ետ կենալ:

- ա) իրենց զինեալ ուժերու մէջ զօրահաւաքէն՝ հակառակ Արեւմտեան Հայաստանի հայերու կամքին, մասնաւորապէս, անոնց օգտագործումէն այլ ժողովուրդներու դէմ,
- բ) մանուկներու զօրահաւաքէն իրենց զինեալ ուժերու մէջ, անկախ հանգամանքներէ,
- գ) հարկադրելէն Արեւմտեան Հայաստանի հայերուն՝ լքելու իրենց երկիրը, հողերը եւ ապրուստի հնարաւորութիւնները եւ կամ վերահաստատուելու ռազմական նպատակներու համար յատուկ կէդրոններու մէջ,
- դ) պարտադրելէն Արեւմտեան Հայաստանի հայերուն՝ աշխատիլ ռազմական նպատակներու համար խտրականութեան պայմաններու մէջ, ինչ ալ որ ըլլան անոնք:



Ուրբաթ 1 Մարտ 2019 - Թիւ 9

Հրատարակչութիւն՝

Արեւմտեան Հայաստանի
Ուսումնասիրութիւններու Կեդրոնի

Հետադարձ կապ
mfa@warmeniagov.com